ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

ՀԱՅՏԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՓՈԽԱԴՐԵԱԼ ԵՒ ՆԵՐԴՐԱՁՆԱԿԱԼ ՅԵՐԻՍ ԵՒ Ի ՀԱՅԻՍ ՀՐՑՆԱ

Ի ՀԵՌՆ Մ. ԵԿՄԱԼԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐՊԵԱՄԲՔ Պ. ԴՐ. ՄԵՂՈՒԻՆԵԱՆ

Ի ՑԻՇԱՏԱԿ ԱՆՈՂՁՑ ԻՒՐՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԲԵՐԲԵՐԻՒ

ԼԻՑՊԻՒ
ՐՒԼՑԱԿՈՊՔ ԵՒ ՀԻՐՏԱԿ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ


1896.

CHANTS
OF THE DIVINE LITURGY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH

TRANSCRIBED AND ARRANGED FOR THREE AND FOUR VOICES

BY

M. YEKMALYAN




YEREVAN – 2017

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ
ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՓՈԽԱԴՐԵԱԼ ԵՒ ՆԵՐԴԱՇՆԱԿԵԱԼ ՅԵՐԻՍ ԵՒ Ի ՉՈՐԻՍ ԶԱՅՆՍ

Ի ՁԵՌՆ
Մ. ԵԿՄԱԼԵԱՆ



ԵՐԵՒԱՆ – 2017

ՀՏԴ 783
ԳՄԴ 85.31
Ե 353

Ե 353 Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան.— Եր.: «Մշակութային վերածնունդ» հիմնադրամ, 2017.— 420 էջ:

Սույն հատորը Մակար Եկմալյանի՝ 1896 թ. Լայպցիգում լույս տեսած Պատարագի առաջին ամբողջական վերահրատարակությունն է:

Նախատեսված է երաժիշտ–կատարողների, հայ երաժշտության ուսումնասիրությամբ զբաղվող երաժշտագետների, ինչպես նաև երաժշտասերների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 783
ԳՄԴ 85.31

ISBN 978–9939–1–0507–9

© «Մշակութային վերածնունդ» հիմնադրամ, 2017



ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻԻՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

BY THE BLESSING

OF HIS HOLINESS

KAREKIN II

SUPREME PATRIARCH AND
CATHOLICOS OF ALL ARMENIANS

ՅԱԹԱՋԱԲԱՆ

Վաղ ուրեմն ծանեան մարդիկ զերաշալի ազդումն երաժշտութեան, որ յեղանակաւորութեամբ ձայնի բազմադիմի ներգործութիւնս թողու ի սիրտս ունկնդրաց. երբեմն ոգի եւ եռանդն ազդէ լքելոց եւ պարտասելոց, երբեմն թովեալ մեղմէ զտարապայմանն աւիւն խիզախելոցն. մերթ ի խինդ եւ ի կայթիռ հրապուրէ զլսողսն, եւ մերթ փոձկեցուցեալ զսիրտս նոցա՝ արտասուս զմայլմանն եւ զթոյ յաչաց նոցա ի վայր հոսեցուցանէ: Վասն այսորիկ ի վաղնջուց հետէ սովորեցան մարդիկ երաժշտութեամբ վարել յամենայն դէպս կենցաղականս, եթէ ի պատերազմի եւ եթէ ի խաղաղութեան, ի հարսանեաց խրախճանութիւնս, եւ ի սուգ սիրելեաց, եւ մանաւանդ ի ծննդախմբութիւնս հանդիսից աստուածպաշտութեան, որպէս եւ տեսանեմք իսկ ոչ միայն յազգս քրիստոնէից, այլ եւ առ հեթանոսս իսկ, ի նախնեաց ժամանակաց հետէ մինչեւ ցայսօր:

Ըստ այսմ՝ եւ երանելի Թարգմանիչքն մեր անդէն յետ զիւտի գրոց, յորժամ ձեռն արկին ի յօրինել եւ ի կարգաւորել զպաշտամունս աղօթից Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ՝ փոյթ յանձին կալան սահմանել եւ զերգեցմունս հոգեւորս, է՛ էնէ՝ զոր յանձանց յօրինելով, եւ բազում՝ այն է՝ որպէս հաւանեալս նմին, զոր ի դրացի ազգաց եւ ի հնագոյն մեհենական երգոց առեալ՝ կանոնեցին զմեզեսին ձայնսն հոգեւոր երաժշտութեան եկեղեցւոյ մերոյ: Իսկ զկնի ժամանակաց երաժշտասէրն նախնիք մեր մուծին ի կիրառութիւն եւ զհապճոյ երաժշտականս, որ տարածեալն էին ընդ Փոքրն Ասիա, զի նորոք դիւրագոյնս ընծայեցուցեն զուսումն յեղանակաց եւ զերծ պահեսցին զայնոսիկ ի խանգարմանց եւ յամենեւին ի կորուստն մատնելոյ:

Այսպէս վարեցան նախնիք մեր յընթացս բազում՝ դարուց, նախ զառաջինն կրսերացն յաւագաց եւ ի քաջահմուտ երաժշտաց զյեղանակսն ուսանելով, եւ ապա՝ երաժշտական խազիցն նպաստաւորութեամբք, որք էին արդարեւ բաւականք, ըստ արդի նշանագրոցն ետրոպացւոց, գհամօրէն եղելէջս յեղանակացն եւ զմիոյ միոյ ձայնի զտեւողութիւն ճշգրտութեամբ ցուցանել, այլ զգեղգեղս եւ զիաղս ինչ եւ զկարեւոր տեւողութիւնս եւս եթէ նշանակեալ՝ յիշեցուցիչք էին մանաւանդ յեղանակացն, քան ստոյգ ցուցակք նոցա: Այլ քանզի զամ՝ քան զգամ՝ ի մոռացումն եկին նշանակութիւնք խազիցն, նա զի եւ բազմօրինակութիւնք նոցա դժուարագոյնս զուսումն նոցա գործէին՝ վասն այսորիկ ի վերջին ժամանակս դարձեալ ըստ առաջնումն յիշողութեամբն լսելեաց սկսան աւանդիլ յեղանակքն ի սերնդոց ի սերունդս, ապա ուրեմն եւ չէր հնար անվթար եւ անփոփոխ մնալ նոցա, այլ ըստ ընդմանէ ժամանակաց եւ ըստ յառաջադիմել արուեստի երաժշտութեան՝ տակաւ փոփոխէին յեղա-

նակքն, նա՛ եւ քազումք իսկ ի հնոց շարականաց ի մոռացումն մատնէին, եւ նորագոյնք յօրինէին ի ձեռն հմուտ երաժշտաց:

Զայս օրինակ տեւեալ ձգեցան երգեցողութիւնք եկեղեցւոյ մերոյ մինչեւ ի ժամանակս հոգելոյս կաթողիկոսին Ց. Դէորգայ Դ., որ ըստ երաժշտասէր քնաւտուր ախորժակի իւրում՝ եւ նախանձաւորութեան քարեզարդութեան կարգաց աստուածպաշտութեան՝ խորհուրդ քարի ի միտս իւր յղացաւ՝ ի տիպ դրոշմել զհամօրէն երգեցողութիւնս, որովք վարի եկեղեցի մեր, իմն զշարականոցին, զժամագրոցն եւ զսրբոյ պատարագին, նորահնար խազիւք, անուանեալն հայկական ձայնագրութեամբ, որ այն ինչ յարմարեալն էր ի Կ. Պոլիս քաղաքի ի ձեռն հայ երաժշտաց ի վերայ հիմանց արուեստի ձայնագրութեան Եւրոպացւոց, քայց միայն առ ի ցուցանել զաստիճանս եւ զտեւողութիւնս ձայնից՝ առանձինն նշանախեցիւք վարելով, զորս յերիւրեցին ի վաղումի խազից շարականոցին: Այսու ձեռնարկութեամբ երաժշտասէրն հայրապետին կանոնաւորեցան ըստ կարի երգեցմունք հոգեւորք յեկեղեցիս Հայոց Ռուսաստանի, այլ մնայաւանդ զերծան նորա յայնմ՝ հետէ եւ առ յապա ի նորանոր աղաւաղութեանց եւ ի վտանգէ կորստեան:

Սոյն այս նախանձաւորութիւն հոգելոյս կաթողիկոսին ի կարգաւորել զերգեցմունս եկեղեցւոյ մերոյ՝ օրինակ քարի եւ յորդոր եղեւ մեզ յայս ձեռնարկութիւն մեր, որ ի մանկութենէ անտի վարժեալ ի հրահանգս երաժշտութեան ի վանս Ս. Էջմիածնի առ կենդանութեամբ նորա՝ այլ եւ քարւոյ մասին դիպեցաք՝ ընդ ձեռամբ եւ ղեկավարութեամբ նորին վաստակել մերովսանս ի ձայնագրութեան շարականաց, երգեցողութեանց սրբոյ պատարագին եւ ըովանդակ ժամագրոցն, որք նորին հրամանաւ ի լոյս ընծայեցան ի Ս. Էջմիածին: Բայց թէպէտ եւ գիտէաք, եթէ ներդաշնակեալն քազմաձայն երաժշտութիւն չէ ինչ անդէպ եւ հակառակ ոգւոյ եկեղեցւոյ մերոյ, զի կատարելութիւն եւ լրութիւն իմն է երաժշտութեան, յորմէ ոչ խորշեցին եւ նախնիքն մեր՝ ի կատարեալն եւ ի զեղեցկագոյնս յօրինելոյ զհոգեւոր երգեցմունս եկեղեցւոյ մերոյ ըստ իւրաքանչիւր դարու եւ ըստ զարգացման արուեստի երաժշտութեան, — քայց ի ձեռնարկելն մեր յայս գործ ներդաշնակութեան սրբոյ պատարագի կարի զգուշութեամբ եւ երկիւղածութեամբ վարեցաք. քանզի հարկ անշուշտ ի վերայ կայր՝ անայլայլակ փոխադրել զմայր յեղանակսն ի շափս եւ ի խազս եւրոպականս՝ ըստ այնմ՝ զիարդ տպագրեալն էին ի Ս. Էջմիածին*, եւ զներդաշնակութիւնն այնպէս իմն յօրինել, զի վայելուչ իցէ ոճոյ եկեղեցական երաժշտութեան եւ պատշաճ լինիցի ոգւոյ եկեղեցական երգեցողութեանց մերոց: Վասն այսորիկ խորշեցաք ընդհանրապէս ի կիսաձայնից արտաքոյ եղեւէջին (chromatisme) եւ ի զարտուղութենէ յեղանակին (modulation), այլ Ջանացաք մնալ յեղեւէջս նորին իսկ յեղանակին (diatonisme) եւ ըստ կարի պարզ յօրինել զներդաշնակութիւնն. զի այսպէս պահանջէ ոգի պարսիկ-արաբացի երաժշտութեան, յորում սակի է եւ մերս:

Այսպիսի զգուշաւորութեամբ ամն ոչ սակաւս ղեգերեցաք յայս գործ, յերիւրելով եւ քարեքելով զբեաղէ զմէն մի նշանախեց քազմապատիկ խորհրդածութեամբ: Ցաւարտ եղա-

---

* Բաց ի "Հայր մերո"-էն (երես 74 եւ 210) եւ ի "Դոհանամո"-էն (եր. 168), որք պակասեն ի մատենի անդ Ջամնագրեալ երգեցողութեանց սրբոյ պատարագի. յորոց զառաջինն յօրինեցաք ըստ յեղանակին, որով պաշտի Հայր մերն ի Ս. Էջմիածին ի տօնս Հայրապետական մաղթանաց. իսկ զերկրորդն՝ ըստ հնագոյն յեղանակի Ս. Էջմիածնի նախ քան զտպագրութիւն Ջամնագրեալ պատարագին:

նել գործոյս՝ կարեւոր համարեցաք տալ զսա ի քննութիւն գերագոյն դատաւորաց երաժշտութեան ի Ռուսաստան, Երաժշտական ճեմարանին, ասեմ, որ ի Ս. Պետերբուրգ, յորում եւ գերաժշտական ուսման մերոյ վճարեալ էաք զնորահանգս, եւ Եկեղեցական Երաժշտանոցի Պալատան: Երկոցունց սոցա քննեալ զգործ մեր՝ առանձինն վկայագրովք, զորոց գրաւոյածան եղաք ի վերոյ՝ վկայեցին, եթէ կանոնաւոր է այս ներդաշնակութիւն ըստ օրինաց արուեստի երաժշտութեան, վայելուչ է ոճոյ եկեղեցական երաժշտութեան եւ պատկանաւոր ի պաշտել յեկեղեցւոջ: Ապա թոյլատուութեամբ Գեր. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի եւ Իմերեթի, Գէորգայ սրբազան Արքեպիսկոպոսի, ամն իսրեւ երկուս ի կիր արկաք զայս ներդաշնակութիւն յեկեղեցւոջ Վանաց որ ի Տփղիս, եւ ի փոքոյ ծանեաք, եթէ ժողովուրդն ոչ միայն հաւրշի, այլ եւ հաճութեամբ եւ ոգեզմայլութեամբ իմն ունկն դնէ քաղցրագոյն ներդաշնակութեան հոգեւոր երգոց: Յայնժամ՝ համարձակեցաք հայցել ի ձեռն նորին Գեր. Առաջնորդի՝ զօրհնութիւն եւ զրարձր հաճութիւն Վեհափառ Հայրապետի մերոյ Տ. Տ. Մկրտչի Ա.՝ ի տիպ դրոշմել զայս վաստակ մեր, առ ի վարել սովաւ յեկեղեցիս Հայոց: Եւ Վեհափառ Հայրապետն լուսամիտ խորհրդով կատարեաց զնայցուած մեր եւ արքատառ կոնդակաւ, որոյ պատճէնիւ պատկեցաք զդրունս մատենիս՝ օրհնեաց զվաստակ մեր եւ բարձր հրամայեաց օրինաւորեաց վկիրառութիւն սորա յեկեղեցիս մեր, յաղագս որոյ արժան է հիմնադիր կոչել զնա կանոնաւոր երգեցողութեան եկեղեցւոյ մերոյ:

Ի վախճան բանիս բաղդ է մեզ լնուլ զորդիական երախտագիտութեան մերոյ զպարտիս, արձանագրացանելով ի տիպ յաւիտեան զանուանս բարերարաց գործոյս, որոց շնորհիւ գլխաւորեցաւ եւ ի լոյս ածաւ սա: Նախ զհոգելոյս Հայրապետն եւ զբարերարն մեր, զՏէր Գէորգ Դ., զսիրողն եւ գնորոգիչ եկեղեցական երաժշտութեան մերոյ, որոյ պանծալի անուանն ձօնեցաք զայս երկասիրութիւն, զերախայրիս իմաստից նորա ի վերայ մեր: Ապա զարժանաւորն յաջորդ եւ զգահակալ նորին Աթոռոյ, զՎեհափառ Հայրապետն մեր զՏէր Մկրտիչ Ա. Հայրիկն ամենայն Հայոց, որ երկան զսա ի խաւարէ ի լոյս՝ տարածեալ սփռել յեկեղեցիս Հայաստանեայց: Հուսկ ուրեմն արժան է խորին շնորհակալութեամբ յիշատակել եւ զՏէր Գէորգ սրբազան Արքեպիսկոպոսն, որ հայրախնամ՝ չանիւ եւ երաժշտասէր ախորժակաւ բազում՝ ինչ սատար եղեւ յաջող կատարածի ձեռնարկութեանս մերոյ, որոյ չանիւք իսկ բարեպաշտօն ս. Գր. Մեղրիենեանց, անսացեալ յորդորանաց կոնդակի Վեհափառ Հայրապետին՝ կամակար սիրով յանձին կալաւ մատրել զծախս տպագրութեան սորա ի յիշատակ ծնողաց իւրոց. որք վասն եւ անկեղծ շնորհակալիս ընկալցի ի մէնջ, նա՛ եւ ի սիրողաց այսր երաժշտութեան, վասն յօժարամիտ նուիրաբերութեանն:

ի 16ին Մայիսի 1896-ին,
ի Տփղիս:

Մ. ԵԿՄԱԼԵԱՆ

PREFACE

For a long time people have acknowledged the wonderful influence of music which has had various effects on the hearts of its listeners. Sometimes it inspires abandoned and tired men and gives them new energy, sometimes by charming it softens the exaggerated vigor of the braves. Music can bring cheerfulness and vivacity to its listeners' ears and sometimes, touching their hearts, it can cause tears of admiration and mercy to spill from their eyes. Because of its affective qualities ever since the antiquity, people have learned to use music in all circumstances of their lives: at the times of war and the times of peace, during wedding festivities and also, at the times of mourning, and, especially, during the solemn worship of God, as it is evident not only among the Christian nations, but also among pagans, beginning from the most ancient times up to now.

And so our blessed translators, promptly after the invention of the Armenian alphabet, when they undertook to create and to arrange the ritual of worship of the Armenian Church, hastened to regulate the spiritual chants as well, composing several of them, and borrowing the majority, as we believe, from neighboring nations and ancient pagan songs, and arranging on their basis the eight modes of the spiritual music of our Church. Later, our philharmonic ancestors started to use the musical notes (Arm. *khazes*), which had already been widely used in Asia Minor, in order to simplify the process of teaching the melodies as well as to preserve them from distortion and disappearance.

Our ancestors have adhered to the following methods for centuries. The younger generations learned the tunes from their elders and were taught by skilled musicians and then they set to learn the *khazes*, which, however, did not precisely express all the intonations of the melodies and the duration of the sounds like the modern European notation did. Noting only some of the trills and the lilts, as well as the important durations, *khazes* were mostly used as reminders of the tunes rather than their exact transcription. As the significance of *khazes* began to deteriorate in memory, it became very difficult to transmit the tunes from generation to generation by heart, especially because of their great diversity. Subsequently, it was impossible to keep the tunes pristine and unaltered, and so the tunes gradually changed as time passed and the musical art developed. Also, many old and sacred hymns were slipping into obsolescence while the new ones were being composed by accomplished musicians.

Therefore, for a long time the sacred chanting of our Church was carried on in that manner until the days of Catholicos Gevorg IV who, with his innate musical talent coupled with a great zeal for the embellishment of ritual practices, came up with the excellent idea of publishing all the sacred chants performed in our Church, i.e. the chants of the Hymnal, the Breviary and the Holy Liturgy. These chants were recorded by the newly invented Armenian notes, known as *Armenian notation*, which were elaborated upon by the Armenian musicians in Constantinople and were based on the European notation art in regards with the signs indicating the pitches and the duration of the notes with appropriate characters, for which they adapted the old notation symbols of the Hymnal. Thanks to the Patriarch's initiative, the sacred chants were now widely regulated in the Armenian Churches in Russia and were preserved from further alterations and the danger of loss.

This zeal of the late Catholicos for putting in order the sacred chants of our Church was a good example and an inspiration for our initiative. During his patriarchate, at the monastery of Etchmiadzin, where we had been studying music since childhood, we were blessed to take part in the process of notating under his vigilance and guidance the chants of the Hymnal, the Holy Liturgy and the entire Breviary, which were published in Holy Etchmiadzin by his order.

Even though we knew that polyphonic, harmonized music was not improper for the spirit of our Church, as it represents perfection and the completeness of the art of music, the fact already acknowledged by our ancestors who for centuries had been composing the sacred chants of our Church in accordance with its development; however, we acted with excessive prudence while harmonizing the Holy Liturgy. It was necessary to transcribe the main tunes without alteration just as they appeared in the publication of Holy Etchmiadzin[1] using European notation system, and to create harmonization in a way that would suit the style of our spiritual music and complement the spirit of our sacred chants. For this reason, we absolutely shunned from the chromaticism and the modulation of the tunes, but we tried to stay within the limits of the diatonicism and compose a harmonization as simple as possible, in line with the spirit of Persian and Arabic music, which is in the same category as Armenian music.

We spent nearly a year completing this work with painstaking accuracy, devoting endless hours to perfecting each character. Having finished the composition, we considered it important to present to expert professionals of the St. Petersburg Conservatory (where we studied), as well as to the St. Petersburg Court Chapel for their judgment. Both establishments, having examined our work, issued certificates (their excerpts are inserted above), attesting that the harmonization of the Liturgy meets the standards of music, is suitable to the style of the church music and is convenient for the performance in the

[1] Except for *Our Father* and *We Give Thanks*, that are missing from the miscellany of *Notated Chants of the Holy Liturgy*. We composed the first one in accordance with the way *Our Father* is performed in Holy Etchmiadzin during the *Patriarch Anthem*, and the second one is in line with an ancient melody from Etchmiadzin, that had been known before the publication of the *Notated Liturgy*.

Church. Afterwards, with the permission of the Primate of the Armenian Diocese of Georgia and Imereti, His Grace Archbishop Gevorg, we used this harmonization in the church of the Armenian monastery in Tiflis for two years. From that experience we observed, that the people not only did not reject, but in fact accepted polyphonic harmonization with delight and marked admiration.

Therefore, with the mediation of the same Most Reverend Primate, we were encouraged to beg for the blessings and high satisfaction of our Catholicos His Holiness Mekertich, to publish our composition in order to be performed in the Armenian churches. With enlightened wisdom, the Catholicos satisfied our request by blessing our work with a sacred encyclical, the copy of which is included in this publication. This way he legitimized its performance in our churches with a high ordinance. Because of his actions, His Holiness deserves to be named the founder of harmonic chanting in our Church.

At the end of our speech, it would please us to fulfill our filial obligation by expressing gratitude to the undying memory of all the benefactors of this work, thanks to whom it was accomplished and published. First of all, we shall name our late Catholicos and benefactor, the great admirer and reformer of the Armenian Church music, His Holiness Catholicos Gevorg IV, to whose glorious memory we dedicate this work. We should also mention the worthy heir and successor of his throne, His Holiness Catholicos Mekertich I, the Father of all Armenians who brought our work out from the darkness into the light, spreading it in the Armenian churches. Finally with deep gratitude we should mention His Grace Archbishop Gevorg who, with his paternal care and philharmonic talent, greatly contributed to the successful accomplishment of our initiative. It was due to his efforts that pious Mr. G. Meghvinyants, submitting to the advices of the Patriarchal encyclical, willingly and eagerly took care of the typographical expenses of our work in memory of his parents. For his voluntary benefaction he has our sincere gratitude, as well as the gratitude of all supporters of this music.

Tiflis, May 10, 1896 *M. YEKMALYAN*

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՐԱԳԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

Պատարագը[1] քրիստոնեական եկեղեցու գլխավոր ծիսական արարողությունն է, որի հիմքում մարդկության փրկության համար Հիսուս Քրիստոսի զոհաբերության կամ պատարագման խորհուրդն է[2]: Պատարագի առանցքային ծիսական պահը Ս. Հաղորդությունն է, որի ընթացքում հավատացյալները հաղորդակցվում, միավորվում են Քրիստոսի հետ՝ ճաշակելով նրա Մարմինն ու Արյունը: Ս. Հաղորդության խորհուրդը հաստատել է Հիսուս Քրիստոսը Վերջին ընթրիքի ժամանակ (Խորհրդավոր ընթրիք)[3], երբ Նա հացը վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց իր աշակերտներին՝ ասելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ Մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց աշակերտներին ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի իմ Արիւնը» (Մատթեոս, ԻՋ 26-28; հմմտ. նաև՝ Ղուկաս, ԻԲ 17-20; Մարկոս, ԺԴ 22-24): Պատարագի արարողության ընթացքում քահանայի աղերսով՝ Աստվածային աներեվույթ զորությամբ, հացը (նշխարը) և գինին փոխակերպվում են Քրիստոսի Մարմնին և Արյանը[4], «որոնք զոհ են մատուցվում մեղքերի թողության և հոգիների փրկության համար»[5]:

Ս. Հաղորդության խորհուրդն Առաքելական շրջանից սկսած վերածվել է պաշտամունքի հատուկ արարողության[6]: Համաձայն Առաքելական ուսուցման՝ այն հոգևոր կյանքի շարունակականության, սրբության, քրիստոնեական սիրո, առաքինագործության, Եկեղեցու ներքին աստվածպաշտության աղբյուրն է[7]:

---

1 «Պատարագ» բառը ստուգաբանվում է որպես «նվեր, ընծա, զոհ»: Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 37:

2 **Վազգեն վարդապետ (Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց)**, Մեր Պատարագը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 43:

3 Նույն տեղում, էջ 99: Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ներածութիւնը՝ Մեսրոպ քահանայ Արամեանի, Երեւան, 2010, էջ 11:

4 **Վազգեն վարդապետ**, նշվ աշխ., էջ 101–102:

5 Նույն տեղում, էջ 103:

6 Նույն տեղում, էջ 42:

7 Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 13–14:

Պատարագը մատուցում է պատարագիչ քահանան[8], որը Քրիստոսի ներկայությունն է խորհրդանշում[9]: Պատարագիչ քահանայի օգնականն է սարկավագը, որը յուրօրինակ միջնորդ է քահանայի և ժողովրդի միջև: Արարողության ընթացքում նա որոշակի հրահանգներով դիմում է ժողովրդին՝ կենտրոնացնելով նրա ուշադրությունը տվյալ ծիսական պահի վրա, հրավիրելով աղոթքի և այլն[10]: Պատարագի մատուցմանը մասնակցում են նաև դպիրները, որոնք հանդես են գալիս ժողովրդի անունից և կատարում օրվա երգեցողությունները[11]:

Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Պատարագը կազմավորվել է Ընդհանրական Եկեղեցու հայրեր Ս. Բարսեղ Կեսարացու (IV դ.), Ս. Գրիգոր Նազիանզացու (IV դ.) և Ս. Հովհան Ոսկեբերանի (IV-V դդ.) ստեղծած Պատարագների հիման վրա[12]: Իր բազմադարյան զարգացման ընթացքում, որ տևել է մինչև XIV-XV դդ., Հայոց Պատարագը ձեռք է բերել ինքնատիպ ազգային նկարագիր թե՛ ծիսական արարողակարգի, թե՛ երաժշտական բաղադրիչի առումով: Այդ գործում մեծ ավանդ են ունեցել Ս. Գրիգոր Լուսավորիչը (III-IV դդ.), Ս. Սահակ Պարթևը (IV-V դդ.), Ս. Հովհան Մանդակունին (V դ.), Ս. Հովհաննես Օձնեցին (VII-VIII դդ.), Խոսրով Անձևացին (X դ.), Ս. Գրիգոր Նարեկացին (X-XI դդ.), Ս. Ներսես Շնորհալին (XII դ.), Ներսես Լամբրոնացին (XII դ.), Խաչատուր Տարոնացին (XII-XIII դդ.) և այլք[13]:

Պատարագը ծավալուն, բազմատարր արարողություն է, որ ներառում է ընթերցվող և երգվող տարբեր ժանրային միավորներ: Ծեսի կարևորագույն բաղկացուցիչներից է երգեցողությունը, որով ուղեկցվում է արարողության ողջ ընթացքը: Ավանդաբար պատարագային երգասացությունները կատարվել են միաձայն, արական երգեցիկ խմբի կողմից՝ առանց գործիքային նվագակցության[14]: Պատարագի երաժշտական բաղադրիչը ներառում է հայ հոգևոր երաժշտության գրեթե բոլոր ժանրերը՝ եղանակավոր

---

[8] Հայ Առաքելական Ս. Եկեղեցում որպես պատարագիչ հանդես են գալիս նաև եպիսկոպոսը և կաթողիկոսը: Տե՛ս Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, կազմեց Գիւտ Ա. քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1907, էջ 75–76:

[9] **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 60:

[10] Նույն տեղում, էջ 48–49, 60–61:

[11] Նույն տեղում, էջ 48:

[12] Տե՛ս **Նորայր Արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 78:

[13] **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, Երևան, 1981, էջ 64: Տե՛ս նաև **Մ. Նավոյան**, Պատարագը Միջնադարում և որպես կոմպոզիտորական արվեստի ժանր, «Ժողովրդական ստեղծագործություն և կոմպոզիտորական արվեստ» (հոդվածների ժողովածու), Երևան, 2006, էջ 94:

[14] Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, ձայնագրությունը հայկական նոտագրությամբ՝ Ն. Թաշճյանի, փոխադրված է եվրոպական նոտագրության, խմբ.՝ Ա. Բաղդասարյան, Երևան, 2012, էջ 339:

(երգվող) քարոզ[15], սաղմոս, շարական[16], տաղ[17], մեղեդի[18] և այլն: Առանձին խումբ են կազմում ժանրային հստակ տարբերազատում չունեցող երգերը (Պատարագի երգեր), ինչպես նաև սրբասացությունները: Նշված ժանրային միավորներն արտացոլում են հայ հոգևոր երգարվեստին հատուկ տարբեր մեղեդիական ոճերը[19] և դրանցով պայմանավորված՝ կատարման տեմպերը[20]: Դրանց շարքում հանդիպում են և՛ պարզ երաժշտական բնութագիր ունեցող՝ վանկային կամ խառը՝ վանկային-ներվանկային (քարոզ, սաղմոս), և՛ զարգացած մեղեդիական նկարագրով օժտված՝ զարդոլորուն նմուշներ (տաղ, *մեղեդի*): Պատարագը ներառում է ինչպես անշարժ (կրկնվող), այնպես էլ շարժական («յաւուր պատշաճի»՝ տվյալ եկեղեցական օրվա խորհրդին համապատասխան) մասեր[21]:

---

15 Սարկավագի երգաբաժնի հիմքը կազմող Պատարագի քարոզները հակիրճ, գլխավորապես ասերգային երաժշտական բնութագիր ունեցող դրվագներ են՝ հիմնված համաքրիստոնեական տեքստային բանաձևերի վրա: Վերջիններիս շարքում հանդիպում են նաև հունարեն եզրեր. «Պռօսխումէ» (հուն.՝ «Ուշադրություն»), «Օրթի» (հուն.՝ «Ոտքի»): Տե՛ս Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 82–83, 92–93: Հայ հոգևոր երաժշտության մեջ քարոզի ժանրն ունի նաև այլ դրսևորումներ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Արևշատյան**, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, «Պատմա–բանասիրական հանդես», 1992, N 2–3, էջ 199–214:

16 *Շարական.* եկեղեցական օրվա համապատասխան ժամին կատարվող հոգևոր երգ, հայ հոգևոր երգարվեստի հնագույն ժանրերից մեկը: Ծիսական գործառույթով պայմանավորված՝ կարող է ունենալ համեմատաբար պարզ, վանկային–ներվանկային (հասարակ օրերի համար նախատեսված շարականներ) կամ առավել զարգացած, ծավալուն մեղեդիական բնութագիր (կիրակի օրերին և խոշոր եկեղեցական տոներին կատարվող շարականներ):

17 *Տաղը* հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի ժանրերից է, որը դրսևորվել է թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր երգարվեստում: Հոգևոր տաղերի ժանրի բարձրարվեստ նմուշներ է հեղինակել Ս. Գրիգոր Նարեկացին:

18 *Մեղեդի.* հայ միջնադարյան հոգևոր երաժշտության հիմնական տեսակներից, որ բնորոշվում է զարդոլորուն մեղեդիական ոճով: Պատարագ է ներմուծվել XIV–XV դարերում: Տե՛ս **Փառեն Եպիսկոպոս Մելքոնեան**, Ծանօթագրութիւնք, Դ. Այսօրուան Պատարագամատոյցին, «Հասկ», 1950, թիւ 7–8, էջ 227: **Նորայր Արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 81: Հետագա շարադրանքում *մեղեդի* եզրը որպես երաժշտաբանաստեղծական ժանրի անվանում կիրառելու ենք շեղատառ:

19 Մեղեդիական ոճը ձևավորվում է երգի բանաստեղծական և երաժշտական բաղադրիչների փոխադարձ կապի միջոցով: Հայ հոգևոր երաժշտության մեղեդիական ոճերը չորսն են. ա) *վանկային (սիլաբիկ)*, որի դեպքում բանաստեղծական տեքստի մեկ վանկին համապատասխանում է մեղեդու մեկ հնչյուն, բ) *ներվանկային (նևմատիկ)*, երբ վանկը եղանակավորվում է 2–5 հնչյուններով, գ) *զարդոլորուն (մելիզմատիկ)*, երբ տեքստի մեկ վանկին համապատասխանում է հինգից ավելի հնչյուններից բաղկացած ծավալուն մեղեդիական կառույց, դ) *խառը*, որը հիմնված է վերը նշված տարբեր ոճերի (օրինակ՝ վանկայինի և ներվանկայինի կամ ներվանկայինի և զարդոլորունի) հավասարաչափ համակցման վրա: Տե՛ս **Ա. Բաղդասարյան**, Հայկական նոտագրության ձեռնարկ, Երևան, 2010, էջ 47:

20 Վանկային մեղեդիական ոճ ունեցող երգերը սովորաբար արագընթաց են, խառը վանկային-ներվանկային երգերը ծավալվում են միջին արագության տեմպերով, իսկ ներվանկային և զարդոլորուն ոճով (կամ դրանց խառը դրսևորմամբ) օժտված նմուշները կատարվում են դանդաղ տեմպով: Հայ եկեղեցական երաժշտությանը բնորոշ տեմպերի տարատեսակների և դրանց եվրոպական համարժեքների մասին տե՛ս **Ռ. Աթայան**, Ձեռնարկ հայկական ձայնագրության, Երևան, 1950, էջ 34, ինչպես նաև **Ա. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 46:

21 Պատարագի անշարժ երաժշտական համարներից են, մասնավորապես, «Մարմին Տէրունական», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Սուրբ, Սուրբ», «Հայր մեր» երգերը: Շարժական համարների շար-

Հայոց Պատարագի երաժշտական բաղադրիչի ճոխացման և բարեկարգման գործում հատկապես մեծ է XII դարի Հայոց կաթողիկոս, հանճարեղ բանաստեղծ-երաժիշտ, հայ հոգևոր երգարվեստի մեծագույն բարենորոգիչ Ս. Ներսես Շնորհալու վաստակը: Նա համալրել է Պատարագի արարողությունը ազգային վառ դիմագծով և գեղարվեստական բացառիկ արժանիքներով օժտված երաժշտաբանաստեղծական նմուշներով: Շնորհալու գրչին են պատկանում դպրաց դասի կատարման համար նախատեսված երգասացությունների գերակշռող մասը[22], ինչպես նաև Պատարագի քարոզները[23]:

Հայ Եկեղեցու Ս. Պատարագը բաղկացած է հետևյալ մասերից՝ ա) Պատրաստություն, բ) Ճաշու ժամի պաշտամունք կամ Երախայից (չմկրտվածների) Պատարագ, գ) Ս. Պատարագի Կանոն կամ Հավատացյալների Պատարագ, դ) Արձակում[24]:

Պատրաստության մասի առավել նշանակալից երաժշտական նմուշներից է «Խորհուրդ խորին» շարականը: Վերջինիս երգեցողությամբ է ուղեկցվում քահանայի զգեստավորումը, որը տեղի է ունենում եկեղեցու ավանդատանը[25]: «Խորհուրդ խորին» շարականը, որը հայ հոգևոր երգարվեստի գլուխգործոցներից է, պահպանվել է եկեղեցական լուր (հասարակ) և տոն օրերի համար նախատեսված մեղեդիական տարբերակներով: Տոն օրերի տարբերակը, որն օժտված է առավել զարգացած նկարագրով, վերագրվում է XII-XIII դարերի նշանավոր բանաստեղծ-երաժիշտ, Հաղարծնի վանքի վանահայր Խաչատուր Տարոնացուն[26]:

Պատրաստության կարևոր ծիսական դրվագներից է Առաջադրությունը, երբ վարագույրով փակված խորանում պատարագիչ քահանան պատրաստում է Ս. Ընծաները՝ նվիրյալ հացն ու գինին[27]: Այս ընթացքում դպիրները երգում են օրվա խորհրդին համապատասխանող *մեղեդին*: Երբեմն նույն դրվագում *մեղեդու* փոխարեն կարող է կատարվել հավուր պատշաճի տաղ[28]:

քին են դասվում սրբասացությունները, շարականները, տաղերը և այլն:

22 Այդ թվում՝ «Յայս յարկ» և «Բարեխօսութեամբ» խնկարկության շարականները, սրբասացությունները, ինչպես նաև «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», «Հայր Երկնաւոր», «Յամենայնի», «Որդի Աստուծոյ», «Հոգի Աստուծոյ» և «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր» երգերը: Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 40–45:

23 Նույն տեղում:

24 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 51–138: Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 20–31:

25 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 51–52:

26 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Երևան, 1985, էջ 278–283:

27 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 57:

28 Տե՛ս **Նորայր Արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 65: Պատարագի արարողության որոշ հատվածներում *մեղեդիները* տաղերով փոխարինելու՝ Նորայր արք. Պողարյանի նշած փաստը Մ. Նավոյանը համարում է տվյալ ժանրերի շփոթ՝ ծիսական գործառույթի խախտման հետևանքով: Տե՛ս **Մ. Նավոյան**, Ժանրերի տարբերազատման խնդիրները հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, «Հայ արվեստի հարցեր», հ. 1, Երևան, 2006, էջ 209–216:

Ճաշու ժամի պաշտամունքը կամ Երախայից Պատարագը սկսվում է Քրիստոսի աշխարհ գալը խորհրդանշող արարողությամբ (Աշխարհգալոց), որի ընթացքում կատարվում է խնկարկություն[29]: Ծիսական այս դրվագն ուղեկցվում է «Յայս յարկ» և «Բարեխօսութեամբ» խնկարկության շարականներով: Հաջորդ կարևոր հատվածներից մեկը Ավետարանի հանդիսավոր վերաբերումն է, որ ուղեկցվում է «Երեքսրբեան աղոթք» կոչվող երգասացությամբ[30]:

Երախայից Պատարագի կենտրոնական դրվագը «Հաւատոյ հանգանակ»-ի («Նիկիական հանգանակ»)[31] հանդիսավոր երգեցողությունն է, երբ ժողովուրդը խոստովանում է ուղղափառ հավատքի դավանանքը[32]: Երաժշտական առումով այս հատվածն ասերգային է:

Ս. Պատարագի Կանոնը կամ Հավատացյալների Պատարագը ողջ արարողության գագաթնակետն է, որի ընթացքում կատարվում է ծեսի գլխավոր խորհուրդը: Առաջին բաժինը կոչվում է Վերաբերություն, որ նշանակում է Պատարագի Ս. Ընծաների վեր բարձրացում և մատուցում Ս. Սեղանին[33]: Այն սկսվում է «Մեծ մուտք»-ով, որ խորհրդանշում է Քրիստոսի փրկական վերելքը դեպի Խաչի զոհասեղան[34]: Սարկավագի՝ «Մի՛ ոք յերախայից…» հրամանից հետո դպիրները խորհրդավոր ձայնով երգում են «Մարմին Տէրունական» երգը: Այնուհետև Ս. Ընծաները հանդիսավոր կերպով դուրս են բերվում Սրբատնից (խորանի հյուսիսային մասում գտնվող պահոցից) և զետեղվում Ս. Սեղանի վրա. հնչում է Պատարագի առավել ազդեցիկ և ոգեշունչ երաժշտական հատվածներից մեկը՝ սրբասացությունը (ըստ հավուր պատշաճի)[35]: Վերաբերության ավարտին՝ «Ողջույնի» ծիսական դրվագում, դպիրները երգում են «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը[36]:

Ս. Պատարագի Կանոնի կարևորագույն ենթաբաժիններից մեկը՝ Գոհությունը, սկսվում է «Սուրբ, Սուրբ» փառաբանական երգով, որի ժամանակ քահանան ծածուկ աղոթք է ասում՝ ուղղված Հայր Աստծուն[37]: Այնուհետև, մինչ դպիրները երգում են՝ «Յամենայնի օրհնեալ ես, Տէր», քահանան օրհնում է հացն ու գինին և խնդրում, որպեսզի

---

[29] **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 58: Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 21:

[30] «Երեքսրբեան աղոթքը» Հայ Առաքելական Ս. Եկեղեցու և քաղկեդոնիկ եկեղեցիների միջև գոյություն ունեցող դավանաբանական վեճերի հիմնական առանցքներից է: Տե՛ս **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 63–64:

[31] «Հաւատոյ հանգանակ»–ում ներկայացված են քրիստոնեական հավատքի դավանաբանական հիմնադրույթները, որոնք ամրագրվել են 325 թ. Նիկիա քաղաքում կայացած Առաջին տիեզերական ժողովում:

[32] **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 75:

[33] Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 22:

[34] Նույն տեղում:

[35] **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 85:

[36] Նույն տեղում, էջ 93–95: Տե՛ս նաև Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 23:

[37] Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 23–24:

նրանք՝ Ս. Հոգու ներգործությամբ, ճշմարտապես և ստուգապես փոխեն իրենց էությունը և վերածվեն Քրիստոսի Մարմնին ու Արյանը[38]: Դրանից հետո սկսվում են խնդրանքներն ու հիշատակների քարոզները[39], որոնց ավարտին՝ «որպես իր խնդրանքների փակում»՝ ժողովուրդը (դպրաց դասը) երգում է «Հայր մեր» Տերունական աղոթքը[40]: Հաջորդ դրվագում պատարագիչ քահանան ի տես ժողովրդի բարձրացնում է Ս. Մարմինը՝ ասելով. «Ի Սրբութիւն սրբոց», իսկ դպիրներն այդ պահին սկսում են երգել՝ «Միայն Սուրբ», այսինքն՝ միայն Սուրբը, միայն Տերը՝ ինքը Հիսուս Քրիստոսն է[41]: Գոհության ենթաբաժինն ավարտվում է Ս. Երրորդության անունների փառաբանմամբ[42]:

Պատարագի նշանակալի երաժշտական հատվածներից մեկը «Տէր, ողորմեա» երգն է, որը Պատարագ է ներմուծվել համեմատաբար ուշ՝ XVIII դարի երկրորդ կեսին: Երգի բանաստեղծական տեքստի հեղինակն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին (1710-1780): Այն պահպանվել է բազմաթիվ մեղեդիական տարբերակներով, որոնցից մեկի սկզբնաղբյուրը Ս. Ներսես Շնորհալուն վերագրվող շարականի մեղեդին է[43]:

Ս. Հաղորդությունը Պատարագի Կանոնի վերջին մասն է, որ սկսվում է «Քրիստոս պատարագեալ» փառաբանական երգով[44]: Նախ հաղորդվում է քահանան, ապա հոգեվոր դասը, որից հետո լսվում է սարկավագի կոչը, որը հորդորում է ժողովրդին երկյուղով և հավատով մոտենալ Ս. Խորհրդին: Ս. Հաղորդության ընթացքում կատարվում է «Որ կազմեցեր» շարականը[45]: Հաջորդ՝ եզրափակիչ հատվածում հնչում են «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր» և «Գոհանամք զՔէն, Տէր» գոհաբանական երգերը[46]:

Ս. Պատարագի արարողության վերջին՝ Արձակման մասում, երբ քահանան Ս. Ավետարանը ձեռքին բեմից իջնում է ներքև, հնչում է «Եղիցի անուն Տեառն օրհնեալ»

---

38 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 101–102:

39 Նույն տեղում, էջ 105–111:

40 Նույն տեղում, էջ 110:

41 Նույն տեղում, էջ 113–114:

42 Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 27:

43 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, էջ 63–64: **Մ. Նավոյան**, Սիմեոն Ա Երեւանցին եւ ԺԸ–ԺԹ դարերի հայ երաժշտական մշակույթի խնդիրները, «Էջմիածին», 2010, ԺԲ, էջ 103–105: «Տէր, ողորմեա» երգի այս տարբերակն իրենց բազմաձայն մշակումներում կիրառել են թե՛ Մ. Եկմալյանը, թե՛ Կոմիտասը: Տե՛ս Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Էյպգիգ–Վիեննա, 1896, էջ 149 (այսուհետ՝ **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896), ինչպես նաև Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Երեւան, 2017, էջ 185 (այսուհետ՝ **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017): **Կոմիտաս**, Պատարագ, Երկերի ժողովածու, յոթերորդ հատոր, խմբ.՝ Ռ. Աթայանի, Երևան, 1997, էջ 68, 109:

44 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 117–118: Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, էջ 27–28:

45 Տե՛ս **Նորայր Արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 78:

46 **Վազգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 126–129:

երգը[47]: Իսկ արարողության ավարտին դպիրներն ու ժողովուրդը վերջին օրհնությունն են ուղղում Աստծուն՝ երգելով. «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ»[48]:

Միջնադարում Պատարագի երգասացություններն ամփոփված են եղել խազագիր[49] Խորհրդատետր-Պատարագամատույցներում, ինչպես նաև ժողովածու տիպի ձեռագրերում: XV-XVI դարերից սկսած՝ խազագրության գործնական նշանակության աստիճանական նվազման և ձայնագրության այլ համակարգի բացակայության պայմաններում Պատարագի երաժշտական բաղադրիչը գոյատևել է գլխավորապես բանավոր կերպով, ինչի հետևանքով ենթարկվել է անհարկի աղավաղումների և հայտնվել մոռացության վտանգի առջև[50]: Դրանից խուսափելու նպատակով XIX դարի երկրորդ կեսից հայկական[51] և եվրոպական նոտագրությամբ գրառվել և հրատարակվել են Պատարագի երգասացություններն ամփոփող ժողովածուներ: Վերջիններիս շարքում երաժշտական նյութի ընդգրկունությամբ և ոճական ամբողջականությամբ առանձնանում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ Քերեստեճյանի նախաձեռնությամբ և երաժիշտ-տեսաբան Նիկողայոս Թաշճյանի ջանքերով հայկական նոտագրությամբ գրառված «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» ժողովածուն, որն ունեցել է երկու հրատարակություն[52]:

---

47 Նույն տեղում, էջ 133:

48 Նույն տեղում, էջ 138:

49 *Խազագրություն.* երաժշտության գրառման համակարգ միջնադարյան Հայաստանում: Ձևավորվել է VIII դարում: XV–XVIII դարերի ընթացքում աստիճանաբար դուրս է եկել կիրառությունից: Եվրոպական միջնադարյան երաժշտության մեջ խազերին համապատասխանում են նևմերը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ռ. Աթայան**, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959:

50 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 66:

51 *Հայկական նոտագրություն (Նոր հայկական ձայնագրություն).* երաժշտության գրառման ոչ գծային համակարգ, որ ստեղծել է երաժիշտ–տեսաբան Համբարձում Լիմոնջյանը՝ XIX դարի սկզբին: Հեղինակի անունով կոչվում է նաև *Համբարձումյան նոտագրություն, Լիմոնջյանի համակարգ*: Տե՛ս **Մ. Մուրադյան**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 37–42: Տե՛ս նաև **Ա. Բաղդասարյան**, Հայկական նոտագրության ձեռնարկ:

52 Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1874, 1878 (այսուհետ՝ **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874 և 1878): XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին գրառվել են նաև Պատարագի՝ հայ հոգևոր երգարվեստի այլ ավանդույթները ներկայացնող տարբերակների երգասացությունները: Ըստ Ն. Թահմիզյանի՝ XVIII–XIX դարերում հայ հոգևոր երգարվեստի ճյուղավորման արդյունքում առաջացել են հինգ համեմատաբար ինքնուրույն երգվածքներ՝ Էջմիածնի (կենտրոնական), Կ. Պոլսի, Նոր Ջուղայի (կամ Հնդկահայոց), Երուսաղեմի և Վենետիկի: Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 65–66: Տվյալ դեպքում մենք հիմք ենք ընդունում այն տեսակետը, համաձայն որի՝ Պատարագի մեղեդիների թաշճյանական գրառումները հիմնականում էջմիածնական մայր երգվածքի դրսևորումն են: Տե՛ս **Մեսրոպ եպս. Սմբատեան**, Հայկական ձայնագրութիւն, «Արարատ», 1881, Ը, էջ 480–481 (տողատակ): **Ա. Արևշատյան**, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, 2003, էջ 24: **Մ. Նավոյան**, Սիմեոն Ա Երեւանցին եւ ԺԸ–ԺԹ դարերի հայ երաժշտական մշակույթի խնդիրները, էջ 106–108:

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ՊԱՏԱՐԱԳԸ

XIX դարի վերջին քառորդից սկսած՝ Հայոց Պատարագը մուտք է գործել կոմպոզիտորական արվեստ. ստեղծվել են պատարագային մեղեդիների բազմաձայն մշակումներ: Առաջին փորձերն այս ասպարեզում կատարել են Մ. Կրապիվնիցկին, Պ. Բիանկինին, Հ. Արսեն վրդ. Այտնյանը, Ք. Կարա-Մուրզան և այլք[53]: Հայկական Պատարագի մշակման ոլորտում առաջին բարձրագույն նվաճումը կապված է XIX դարի երկրորդ կեսի հայ ականավոր կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ Մակար Եկմալյանի անվան հետ:

Մակար Եկմալյանը ծնվել է 1856 թ., Վաղարշապատում[54]: 1872 թ. ավարտել է տեղի Ժառանգավորաց դպրոցը: 1873-74 թթ. Ն. Թաշճյանի ղեկավարությամբ յուրացրել է հայկական նոտագրությունը: 1874-77 թթ. Գևորգյան ճեմարանում դասավանդել է երգեցողություն և հայ եկեղեցական երաժշտության տեսություն՝ զուգահեռաբար հաճախելով ճեմարանի որոշ դասընթացներին: 1879-1888 թթ. սովորել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի ստեղծագործության (կոմպոզիցիայի) տեսության, այնուհետև՝ գործնական ստեղծագործության բաժիններում՝ աշակերտելով Յու. Իոգանսենին, Ա. Լյադովին, Ն. Սոլովյովին և Ն. Ռիմսկի-Կորսակովին: Այդ տարիներին ղեկավարել է Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախումբը: 1891-ից բնակվել է Թիֆլիսում, պաշտոնավարել տեղի Ներսիսյան հոգևոր դպրոցում՝ որպես երաժշտության ուսուցիչ և խմբավար: 1893-94 թթ. դասավանդել է Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի մասնաճյուղի ուսումնարանում: Վախճանվել է Թիֆլիսում 1905 թ.[55]:

Մ. Եկմալյանի՝ որպես երաժշտի կայացումը համընկել է հայ երաժշտական մշակույթի զարգացման առավել կարևոր, բեկումնային փուլերից մեկի հետ, որին նա գործուն մասնակցություն է ունեցել: Ինչպես վերը նշվեց, այս շրջանում հայ առաջադեմ երաժիշտների և հոգևոր դասի ներկայացուցիչների ջանքերով իրագործվում էր հայ հոգևոր երգարվեստի դարավոր հարուստ ժառանգության գրառումը, հայ եկեղեցական երաժշտության կանոնակարգումը: Այս գործիչներից էր պոլսահայ երաժիշտ, հայ հոգեվոր երաժշտության տեսաբան, հայկական ձայնագրության փայլուն գիտակ Նիկողայոս Թաշճյանը, որը Գևորգ Դ կաթողիկոսի հրավերով 1873 թ. գալիս է Վաղարշապատ՝ Ժառանգավորաց դպրոցի սաներին հայկական նոտագրություն սովորեցնելու և հմուտ շարականագետ Գևորգ Դ-ի երգածից հայ եկեղեցու կարևորագույն ծիսական ժողովածու-

---

53 Տե՛ս **Մ. Մուրադյան**, Հայկական Պատարագը և նրա մշակումները, «Հայկական արվեստ» (հոդվածների ժողովածու), գիրք 2, Երևան, 1984, էջ 149–164: **Ժ. Ռէիսեան**, Ս. Պատարագը եւ հայկական Պատարագի զարգացումն ու բազմաձայն տարբերակները, «Տաթեւ» հայագիտական տարեգիրք, 1, Հալէպ, 2008, էջ 418–470:

54 Մ. Եկմալյանի կենսագրությունն առավել մանրամասն տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 6–50:

55 Որոշ աղբյուրներում հանդիպող տեղեկության համաձայն՝ երաժիշտն իր մահկանացուն կնքել է Վաղարշապատում: Ռ. Աթայան, Մակար Եկմալյան. տե՛ս «Մակար Եկմալյան. վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ», Երևան, 2006, էջ 106:

ները («Պատարագ», «Շարակնոց», «Ժամագիրք») ձայնագրելու նպատակով: Կարճ ժամանակահատվածում Մ. Եկմալյանը դառնում է Ն. Թաշճյանի լավագույն սաներից մեկը՝ օժանդակելով նրան վերոհիշյալ ժողովածուների գրառման գործում, իսկ ուսուցչի՝ Կ. Պոլիս վերադառնալուց հետո նախապատրաստում է «Պատարագի» երկրորդ՝ խմբագրված և լրացված հրատարակությունը[56]: Ն. Թաշճյանի հմուտ ղեկավարությամբ Մ. Եկմալյանը ոչ միայն կատարելապես յուրացնում է հայկական նոտագրությունը, տիրապետում հայ հոգևոր երգարվեստի տեսական հիմունքներին, այլև ընդհանուր պատկերացում կազմում բազմաձայն երգեցողության մասին[57]: Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայում սովորելու վերջին շրջանում Մ. Եկմալյանը ձեռնամուխ է լինում թաշճյանական Պատարագի մեղեդիների բազմաձայն մշակման առաջին փորձերին (եռաձայն արական խմբի համար)[58]: Ուսումնառությունն ավարտելուց հետո նա հետևողականորեն շարունակում է Պատարագի եռաձայն ներդաշնակումը և հիմնական մասով ավարտում այն մինչ Թիֆլիս տեղափոխվելը (1891 թ.): Այս ընթացքում Եկմալյանը պարբերաբար վերախմբագրում և կատարելագործում է արված մշակումները՝ Պետերբուրգի հայկական եկեղեցու երգեցիկ խմբի փորձնական կատարումների միջոցով: Որոշ ժամանակ անց եռաձայն մշակման առանձին հատվածներ հնչում են նույն եկեղեցում՝ կիրակնօրյա Պատարագների ընթացքում[59]: Եռաձայն Պատարագի հատվածները ներառվում են նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի՝ Եկմալյանի ջանքերով վերակազմավորված երգեցիկ խմբի երկացանկում, կատարվում հայկական եկեղեցում՝ կիրակնօրյա Պատարագներին:

1892 թ. Եկմալյանն ավարտում է Պատարագի քառաձայն մշակման երկու տարբերակները՝ արական և խառը կազմերի համար: Նույն տարվա ավարտին նա Պատարագի ամբողջական տարբերակը ներկայացնում է Ս. Պետերբուրգի Պալատական կապելլայի և կոնսերվատորիայի գեղարվեստական խորհուրդներին, որոնք բարձր են գնահատում Եկմալյանի ստեղծագործության գեղարվեստական արժանիքները[60]: Պատա-

---

56 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 8–11:

57 Կ. Պոլսում արդեն 1870–ական թթ. Պատարագի որոշ մեղեդիներ կատարվում էին երկձայն: Կաթողիկոսի թույլտվությամբ՝ Պատարագի առանձին մեղեդիների գրառումներում Ն. Թաշճյանը պահպանել էր այդ սկզբունքը (**Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 11): Հաշվի առնելով այն փաստը, որ Ն. Թաշճյանը տիրապետում էր նաև եվրոպական նոտագրությանը, կարելի է ենթադրել, որ նա իր սանին նախնական գիտելիքներ է հաղորդել նաև այս բնագավառում:

58 Ըստ Ն. Թահմիզյանի՝ Պատարագի մշակման աշխատանքները Եկմալյանը սկսել էր գործնական ստեղծագործության դասարանում (1885 թ.–ից) կամ ավելի վաղ. տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 17: Պատարագի մեղեդիների թաշճյանական գրառումները գլխավոր մեղեդիական աղբյուր են ծառայել նաև Քրիստափոր Կարա–Մուրզայի և Կոմիտասի Պատարագների համար: Տե՛ս **Գ. Փիտէճեան**, Քրիստափոր Կարա–Մուրզա, Երեւան, 2013, էջ 148: **Կոմիտաս**, Պատարագ, էջ 121–122:

59 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 17–18:

60 Վերոհիշյալ խորհուրդների կազմում էին, մասնավորապես, ռուսական երաժշտության դասականներ Մ. Բալակիրևն ու Ն. Ռիմսկի–Կորսակովը: Խորհուրդները հաստատել են իրենց կարծիքը պաշտոնական վկայագրերով: Նույն տեղում, էջ 24–25: Տե՛ս նաև **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 4, «Մակար Եկմալյան. վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ», էջ 14:

րագը մեծ խանդավառությամբ է ընդունվում նաև Թիֆլիսի հայկական երաժշտական միջավայրում և Էջմիածնում: 1895 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը հատուկ կոնդակով թույլատրում է կատարել և տպագրել Պատարագը[61]: Մ. Եկմալյանի «Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հիմնարար երկը հրատարակվում է 1896 թ., Լայպցիգում, գերմանական նշանավոր *Breitkopf & Härtel* հրատարակչության տպարանում, թիֆլիսահայ մեկենաս Գ. Մեղվինյանի ծախսերով[62]: Պատարագի բառատեքստը շարվում է Վիեննայում՝ Մխիթարյան միաբանության տպարանում: Տպագրության աշխատանքները վերահսկում են Մ. Եկմալյանը՝ Լայպցիգում և նրա մտերիմ ընկեր, հայ մեծանուն բանասեր, լեզվաբան Ստեփանոս Մալխասյանցը՝ Վիեննայում[63]: Կոմպոզիտորն ընծայում է իր ստեղծագործությունը Գևորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիշատակին[64]:

Կարճ ժամանակահատվածում Եկմալյանի Պատարագը տարածվում է Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության ենթակայության տակ գտնվող այլ հայկական համայնքներում, արժանանում ժամանակի առաջադեմ հայ և եվրոպական երաժշտական գործիչների (Կոմիտաս, Ջ. Վերդի, Կ. Սեն-Սանս և այլք) բարձր գնահատականին[65]: Կոմիտասն առաջինն էր, որ արժևորեց Եկմալյանի Պատարագը մասնագիտական տեսանկյունից: «Երգեցողութիւնք Ս. Պատարագի» հոդվածում, որոշ սկզբունքային դիտողություններով հանդերձ, Կոմիտասը բավական բարձր է գնահատել կոմպոզիտորի երկը՝ ընդգծելով նրա կարևոր դերը հայ երաժշտական մշակույթի զարգացման տեսանկյունից[66]:

Մ. Եկմալյանի Պատարագը նշանակալից իրադարձություն էր հայ երաժշտության պատմության մեջ: Այն հայ իրականության մեջ կանտատ-օրատորիալ ժանրի առաջին դրսևորումն էր, որտեղ հայ հոգևոր երգարվեստի առանձնահատկությունները ստեղծագործական բարձր վարպետությամբ միաձուլված էին եվրոպական դասական երաժշտության արտահայտչամիջոցների հետ: Ավանդական պատարագային մեղեդիների

---

61 **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 5–6: «Մակար Եկմալյան. վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ», էջ 17–18:

62 Հատորում զետեղված է նաև Մ. Եկմալյանի Առաջաբանը: Տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 7–9 և **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ VII–IX:

63 Տե՛ս **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 126: Ինչպես նշում է Ռ. Աթայանը, Ս. Մալխասյանցը զգալի աջակցություն է ցուցաբերել խմբագրական գործում՝ Պատարագը հրատարակության պատրաստելիս:

64 Տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 3:

65 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 34:

66 **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի. տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով (աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի), Գիրք Ա, Երևան, 2005, էջ 90–106: Վերոհիշյալ հոդվածը երիտասարդ Կոմիտասի բարձրարժեք երաժշտագիտական աշխատանքներից է, որտեղ ամփոփ ձևով շարադրված են նրա հիմնական տեսական դրույթները հայ երաժշտության մասին: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 128–130, 136–137, ինչպես նաև **Մ. Մուրադյան**, Եկմալյանի Պատարագը Կոմիտասի գնահատությամբ, «Կոմիտասական», հ. 1, Երևան, 1969, էջ 218–229: Ինչպես հայտնի է, մինչև Բեռլին մեկնելը (1895 թ.) Կոմիտասը ժամանակավորապես ուսանել է Մ. Եկմալյանի մոտ: Տե՛ս **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 127:

տիպական հատկանիշները հնարավորինս հարազատորեն վերարտադրելու ձգտումը պայմանավորեցին ստեղծագործության երաժշտական լեզվի պարզությունը, արտահայտչամիջոցների խնայողաբար կիրառումը: Մ. Եկմալյանի՝ գեղարվեստական ներգործության մեծ ուժով և ոճական կուռ ամբողջականությամբ[67] օժտված Պատարագը մինչկոմիտասյան շրջանի հայ երաժշտության խոշորագույն ձեռքբերումներից մեկն է[68]:

Ստեղծման ժամանակաշրջանից մինչ օրս Մ. Եկմալյանի Պատարագը շարունակում է մնալ առավել կիրառելի հոգևոր ստեղծագործությունը թե՛ բուն Հայաստանում, թե՛ աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում: Չնայած այս հանգամանքին՝ ստեղծագործությունն իր ամբողջական տեսքով երբևէ չի վերահրատարակվել: Առկա հրատարակությունների գերակշռող մասի հիմքը Պատարագի՝ քառաձայն խառը կազմի համար նախատեսված տարբերակն է՝ մասնակի հավելումներով մյուս երկու (եռաձայն արական և քառաձայն արական) տարբերակներից[69]: Բացի նշվածից՝ որոշ հրատարակություններում բնագրի ոճական ամբողջականությունը խաթարված է խմբագրական սկզբունքային միջամտություններով[70]:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ մեր օրերում Մ. Եկմալյանի Պատարագի անդրանիկ հրատարակությունից հազվագյուտ նմուշներ են պահպանվել, 121 տարի անց իրականացվում է այս կոթողային գործի երկրորդ տպագրությունն իր սկզբնական ամբողջական տեսքով: Վերահրատարակության նպատակներից մեկը նաև ստեղծագործությունը օտարալեզու կատարողների համար հասանելի դարձնելն է (բնագրի բառատեքստը զուգորդված է անգլերեն թարգմանությամբ[71] և տառադարձությամբ):

---

67 Այս հատկանիշը բազմիցս ընդգծվել է Մ. Եկմալյանի Պատարագի մի շարք ուսումնասիրողների կողմից՝ սկսած Կոմիտասից: Տե՛ս Կոմիտասի նամակը՝ հասցեագրված Վահրամ եպս. Մանկունուն. հրատարակված է «Մակար Եկմալյան. վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ» ժողովածուում (էջ 43):

68 Պատարագից բացի Մ. Եկմալյանի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է նաև հայ հոգևոր երաժշտության առանձին նմուշների խմբերգային մշակումներ, աշխարհիկ խմբերգեր և մեներգեր, որոնց շարքում հանդիպում են և՛ ժողովրդական սկզբնաղբյուր ունեցող, և՛ հեղինակային մեղեդիական նյութի վրա հիմնված ստեղծագործություններ: Լայն ճանաչում են վայելում հատկապես կոմպոզիտորի հայրենասիրական խմբերգերը («Ո՜վ հայոց աշխարհ», «Լռեց» և այլն):

69 Տե՛ս, օրինակ, Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Պոստոն, 1919: Երգեցողութիւնք Սուրբ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ, ի գիր առեալ և դաշնաւորեալ վասն երկսեռ դասու դպրաց ի ձեռն Մ. Եկմալեան, Նիւ Եորք, 1950: **Մակար Եկմալեան**, Դաշնաւորեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ (վասն քառաձայն խառն խմբի), Անթիլիաս, 1974 և այլն:

70 Մասնավորապես, հրատարակություններից մեկում փոփոխված է բնագրային երաժշտական նյութի տակտաբաժանման սկզբունքը. տե՛ս Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ըստ Մակար Եկմալեանի, Փարիզ, 1995: Մեկ այլ հրատարակության մեջ լրացված են սարկավագի երգաբաժնի՝ բնագրում բացակայող երաժշտական դրվագները, հավելված են այլ հեղինակների մշակումներ: Տե՛ս **Մակար Եկմալեան**, Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցւոյ, Նիւ Եորք, 1979:

71 Պատարագի անդրանիկ հրատարակության մեջ Մ. Եկմալյանի Առաջաբանը և Պատարագի տեքստը տրված են նաև ֆրանսերեն թարգմանությամբ, որոնք սույն հրատարակության մեջ ներկայացված են

Հատորի վերջում զետեղված են «Վերլուծական ակնարկ» և «Ծանոթագրություններ» բաժինները, որոնցից առաջինում ներկայացված է Մ. Եկմալյանի Պատարագի համեմատությունը թաշճյանական Պատարագի՝ 1874 և 1878 թթ. հրատարակությունների հետ, ինչպես նաև քննության են առնված Ն. Թաշճյանի գրառած Պատարագի մեղեդիների եկմալյանական մշակման սկզբունքները: «Ծանոթագրություններ» բաժինը ներառում է խմբագրական պարզաբանումներ՝ Պատարագի առանձին դրվագների ծիսական գործառույթին, հատորում դրանց դասավորության ու կատարման սկզբունքներին, բառատեքստին և նոտային տեքստին առնչվող մասնավոր հարցերի վերաբերյալ:

անգլերենով: Պատարագի տեքստի անգլերեն թարգմանության համար գլխավոր ուղեցույց ենք ունեցել հետևյալ աղբյուրը՝ Պատարագամատոյց Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ, անգլերէն թարգմանութեամբ եւ բացատրական յաւելուածովք Տիրան Արքեպիսկոպոսի Ներսոյեան, Լոնտոն, 1984: Հիշյալ աղբյուրում բացակայող հավուր պատշաճի որոշ համարների (թիվ 39, 40, 44) թարգմանությունը լրացրել ենք հետևյալ հրատարակությունից՝ Պատարագամատոյց կամ Խորհրդատետր Սուրբ Պատարագի. ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ: Դասաւորեալ եւ թարգմանեալ յանգլիական բարբառ, հանդերձ ձայնագրութեամբ երգոց Ս. Պատարագի, աշխատասիրեաց տէր Թէոդորոս Տէր Իսահակեան, Ֆրեզնօ, 1932: «Այսօր հարսն Լուսոյ» *մեղեդու* (թիվ 41) թարգմանությունը կատարել է Ա. Չարխչյանը:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Պատարագի բառատեքստի սխալներն ու վրիպակներն ուղղել ենք ըստ Հայ Առաքելական Ս. Եկեղեցում կիրառվող Խորհրդատետր-Պատարագամատույցների մի շարք հրատարակությունների[72]: Նույն աղբյուրների վրա հիմնվելով՝ լրացրել ենք քահանայի և սարկավագի խոսքերում երբեմն հանդիպող առանձին բառերի կրճատումները (օրինակ՝ «Խաղաղութիւն ամեն:» - «Խաղաղութիւն ամենեցուն...»):

2. Մ. Եկմալյանի Պատարագի բառատեքստում վանկատումները մեկ միասնական սկզբունքի չեն ենթարկվում: Մոտեցումը վանկատման հարցին միատեսակ չէ նաև թաշճյանական Պատարագում: Հայտնի է, որ գրաբարի վանկատման օրինաչափությունների ոլորտում միջնադարյան քերականների երկերում ևս միակարծություն չի դրսևորվել[73]: Հարցի կապակցությամբ հստակ ցուցումներ է թողել XIII դարի մատենագիր, մեկնիչ և երաժիշտ Գրիգոր Սկևռացին: Նրա ձևակերպած վանկատման և տողադարձի կանոնները զգալի չափով հաղթահարել են գոյություն ունեցող խառնաշփոթը և մասնակի փոփոխություններով հանդերձ՝ տեղ գտել նաև ժամանակակից հայերենում[74]: Արդի հայ լեզվաբաններից գրաբարի վանկատման հիմնական օրինաչափություններին հանգամանորեն անդրադարձել է Էդուարդ Աղայանը[75]: Ուղեցույց ունենալով նշյալ երկու աղբյուրները՝ մենք վերափոխել ենք Մ. Եկմալյանի Պատարագի բառատեքստում հան-

---

Թաշճյանական վերոհիշյալ հրատարակություններից յուրաքանչյուրը ներառում է Պատարագի՝ մեկից ավելի մեղեդիական տարբերակներ՝ նախատեսված եկեղեցական օրացույցի որոշակի օրերի համար: 1874 թ. հրատարակությունն ընդգրկում է երկու ենթաբաժին, որոնցից առաջինն անխորագիր է: Այն հիմնականում ներառում է կիրակի և այլ հանդիսավոր օրերի, Տաղավար տոների համար նախատեսված պատարագային երգասացությունները, ինչպես նաև Պատարագի մաս կազմող որոշ ժանրային միավորների (մեղեդիներ, սրբասացություններ) հավուր պատշաճի տարբերակները[4]: Նույն հրատարակության երկրորդ՝ «Վասն լուր աւուրց» խորագրով ենթաբաժնում ամփոփված են Պատարագի՝ լուր, այսինքն հասարակ, ոչ տոնական օրերին կատարվող տարբերակի երգասացությունները[5]: Թաշճյանական Պատարագի 1878 թ. հրատարակու-

---

[1] Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1874, 1878 (այսուհետ՝ **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874 և 1878): 1930–ական թթ. սկսած՝ Սպիրիդոն Մելիքյանի շնորհիվ հայ երաժշտագիտության ոլորտ է ներմուծվել այն կարծիքը, ըստ որի Մ. Եկմալյանը էջմիածնական եղանակները կիրառել է իր Պատարագի միայն առաջին և երրորդ (եռաձայն արական և քառաձայն խառը կազմերի համար գրված) տարբերակներում, մինչդեռ երկրորդ՝ քառաձայն արական խմբի համար նախատեսված տարբերակում կոմպոզիտորը հիմք է ընդունել Պոլսական ավանդույթին պատկանող մեղեդիները (ընդ որում տվյալ դեպքում Պոլսական ավանդույթի դրսևորում են համարվում հենց թաշճյանական գրառումները): Այս կարծիքը հետագայում համոզիչ կերպով հերքել են Ռ. Աթայանը և Ն. Թահմիզյանը: **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան. տե՛ս «Մակար Եկմալյան. վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ», Երևան, 2006, էջ 137–140: **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, Երևան, 1981, էջ 68–69:

[2] Տե՛ս Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Լէյպցիգ–Վիեննա, 1896, էջ 8 (այսուհետ՝ **Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896), ինչպես նաև Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Երեւան, 2017, էջ VIII (այսուհետ՝ **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017):

[3] Նույն տեղում: Եկմալյանական Պատարագում հանդիպում են ևս յոթ մասեր, որոնց մեղեդիական սկզբնաղբյուրները թաշճյանական Պատարագում ներկայացված չեն: Այս հարցին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև: Վերջապես՝ իր մշակման մեջ Եկմալյանը ներառել է նաև հավուր պատշաճի երգվող երեք Ճաշու շարականներ (թիվ 42–44), որոնց սկզբնաղբյուրները վերցված են Ն. Թաշճյանի գրառած «Շարակնոց» ժողովածուից: Տե՛ս Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ, 65–66, 71–72, 437–438:

[4] Տե՛ս **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 3–76:

[5] Նույն տեղում, էջ 78–160:

թյան մեջ 1874 թ. հրատարակության առաջին ենթաբաժնի մաս կազմող միավորները համալրվել են և ամփոփվել առանձին ենթաբաժիններում: Ընդլայնվել է նաև Պատարագի՝ լուր օրերի տարբերակը և հավելվել է ևս մեկ տարբերակ՝ նախատեսված Մեծ Պահքի շրջանի համար: Այսպիսով՝ 1878 թ. հրատարակությունը ներառում է Պատարագի հետևյալ տարբերակները. ա) Կիրակի և այլ հանդիսավոր օրերի համար, բ) Լուր օրերի համար, գ) Տաղավար[6] տոների համար, դ) Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերի համար:

Թաշճյանական Պատարագի՝ 1874 և 1878 թթ. հրատարակությունների միևնույն տարբերակներում ներառված համանուն միավորների երաժշտական բաղադրիչների համեմատությունը ցույց է տալիս, որ նույնական կտորներ գրեթե չեն հանդիպում: Մեծ մասամբ համանուն երաժշտաբանաստեղծական միավորներն իրենցից ներկայացնում են զգալիորեն հարազատ, առանձին կառուցվածքաբանական հատվածների մակարդակում լիովին համընկնող մեղեդիական տարբերակներ: Օրինակների զգալի մասում տարբերությունները նվազագույնի են հասնում՝ դրսևորելով առանձին մեղեդիական դարձվածքների ոչ էական ռիթմաինտոնացիոն փոփոխություններ: Ընդ որում՝ հաճախ առաջին հրատարակության մեջ համեմատաբար պարզ, վանկային–ներվանկային մեղեդիական ոճ ունեցող նմուշները 1878 թ. հրատարակության մեջ հանդես են գալիս առավել զարգացած մեղեդիական նկարագրով, ինչը պայմանավորված է ներվանկային և զարդոլորուն ոճի գերակա դերով[7]: Որոշ դեպքերում, սակայն, առկա է նաև հակառակ միտումը[8]:

Իր Պատարագը ստեղծելիս Մ. Եկմալյանն առավելապես հիմնվել է թաշճյանական Պատարագի առաջին՝ 1874 թ. հրատարակության վրա, թեև մի շարք դեպքերում օգտվել է նաև երկրորդից: Կոմպոզիտորի մշակումների գերակշռող մասի մեղեդիական նյութը վերցված է Ն. Թաշճյանի գրառած Պատարագի առաջին (Կիրակի օրերի) տարբերակից: Մասնակիորեն կիրառվել են նաև Լուր օրերի, ինչպես նաև 1878 թ. հրատարակության՝ Տաղավար տոների և Մեծ Պահքի տարբերակների երգասացությունները: Պատարագի մշակման երեք տարբերակներում (եռաձայն արական, քառաձայն արական և քառաձայն խառը կազմերի համար) Մ. Եկմալյանը նպատակ է հետապնդել հնարավորինս պահպանելու ծեսի ամբողջականությունը՝ միևնույն ժամանակ ձգտելով ներկայացնել թաշճյանական Պատարագի երկու հրատարակություններում ամփոփված մեղեդիական նյութի ողջ հարստությունը: Այսպես, Պատարագի երեք տարբերակներում միասին վերցրած՝ արարողության անշարժ մասերի կեսը ներկայացված է երկուական,

---

[6] Տաղավար են կոչվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ մեծ Տերունական (Հիսուս Քրիստոսի կյանքի կարևորագույն դրվագների հիշատակության հետ կապված) տոները: Տաղավար տոներն են՝ Ս. Ծնունդ և Աստվածահայտնություն, Ս. Հարություն (Ս. Զատիկ), Վարդավառ (Այլակերպություն և Պայծառակերպություն), Վերափոխումն Ս. Աստվածածնի, Խաչվերաց:

[7] Հմմտ. **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 32, 34, 57 և **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1878, համապատասխանաբար էջ 14, 16, 25:

[8] **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 50–51 և **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1878, էջ 20–21:

երբեմն՝ երեքական մեղեդիական տարբերակներով: Չեն ընդգրկվել Պատարագի շարժական (հավուր պատշաճի փոփոխվող) մասերից շատերը, այդ թվում՝ մեկ սրբասացություն, որոշ մեղեդիներ, բոլոր տաղերը, Ճաշու շարականների գերակշռող մասը և այլն: Դպիրների և սարկավագի կողմից երգվող կտորներից բացի՝ Եկմալյանի Պատարագում տրված են հատվածներ քահանայի երգաբաժնից (միայն բառատեքստով), ինչպես նաև՝ արարողության առանձին պահերին վերաբերող հակիրճ պարզաբանումներ[9]:

Պատարագի մեղեդիների՝ Մ. Եկմալյանի իրագործած մշակումներն արտացոլում են կոմպոզիտորի խիստ նրբանկատ մոտեցումը Պատարագի մայր եղանակների հանդեպ[10], իսկ դրանց մեծագույն մասի ռիթմահնտոնացիոն ոլորտում կոմպոզիտորի ձեռնարկած ոչ էական միջամտությունները միտված են մեղեդիների նկարագրի պարզեցմանն ու երաժշտաբանաստեղծական ձևի ամբողջականության ձեռքբերմանը: Ուստի, Ռ. Աթայանի բնորոշումը կիրառելով, այդ միջամտությունները կարելի է որակել իբրև բնագրային մեղեդիների՝ նրբորեն արված խմբագրում[11]: Մեր դիտարկումը ցույց է տալիս, որ եկմալյանական մշակումների գերակշռող մասում վերոհիշյալ խմբագրումը դրսևորվում է հետևյալ հիմնական ձևերով.

ա) մեղեդիական կառույցի հիմքը կազմող հնչյունների ազատագրում մանր տևողություններով շրջազարդումներից, ինչպես նաև մեղեդու՝ ծավալուն զարդոլորումներ պարունակող դրվագների կրճատում (օրինակ 1 ա–դ)[12].

Օրինակ 1 ա, բ, գ, դ

ա) «Սուրբ, Սուրբ», Ն. Թաշճյան (1874)




---

9 Ինչպես թաշճյանական Պատարագի երկու հրատարակություններում, այնպես էլ Մ. Եկմալյանի Պատարագում սարկավագի որոշ ասերգեր տրված են միայն բառատեքստով՝ առանց երաժշտական բաղկացուցչի (տե՛ս, օրինակ, **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 59, 74–75, **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1878, էջ 15, 18, 63, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 29, 59, 90 ևն: Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում): Պատարագում առկա է նաև երգչախմբի երգաբաժնի դաշնամուրային փոխադրումը (կլավիր), սակայն երգչախմբային պարտիտուրի և կլավիրի որոշ դրվագների ռիթմական անհամապատասխանությունները հիմք են տալիս ենթադրելու, որ կոմպոզիտորը նախատեսել է կլավիրը նաև որպես նվագակցություն (տես, օրինակ, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 10, տակտ 6, էջ 48, տակտ 2, էջ 50, տակտ 1 ևն):

10 Կոմպոզիտորի հավաստմամբ՝ նման մոտեցումը պայմանավորված է եղել իր մշակման մեջ Պատարագի ավանդական եղանակների ոճական ամբողջականությունը պահպանելու, հայ հոգևոր երգարվեստի ոգուն առավելագույնս հարազատ մնալու ձգտումով: Տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, Մ. Եկմալյանի Առաջաբանը, էջ VIII:


11 Տե՛ս **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 140–141:

12 Հայ ավանդական եկեղեցական երաժշտության բնական (ոչ հավասարաչափ) տեմպերացիային հատուկ է միկրոալտերացիայի երևույթը, երբ հնչյունները տարբերակվում են կես տոնից պակաս չափով: Եվրոպական նոտագրության մեջ կես տոնից պակաս բարձրացումն արտահայտվում է աստղանիշով (օրինակ 1 գ, 6 ա), իջեցումը՝ թեք գծիկով: Տե՛ս **Ա. Բաղդասարյան**, Հայկական նոտագրության ձեռնարկ, Երևան, 2010, էջ 30–31:



բ) ռիթմական շարադրանքի խոշորացում, որ կարող է դրսևորվել թե՛ երաժշտաբանաստեղծական ձևի ամբողջ ծավալի (հազվադեպ)[13], թե՛ նրա առանձին բաղկացուցիչ մասերի մակարդակով (առավել հաճախ. տե՛ս օրինակ 2 ա, բ).

Օրինակ 2 ա, բ



Հարկ է ընդգծել, սակայն, որ առանձին դեպքերում կոմպոզիտորը կիրառել է նաև հակառակ սկզբունքը՝ բնագրային տարբերակի համեմատությամբ ակտիվացնելով ռիթմական ընթացքը[14] կամ մեծացնելով մեղեդու ներվանկային տարրի տեսակարար կշիռը: Նման փոփոխության հազվադեպ օրինակներից է «Մարմին Տէրունական» երգի՝ եռաձայն արական և քառաձայն խառը խմբերի համար նախատեսված տարբերակը, որի մեղեդիական գիծը Մ. Եկմալյանն առավել սահուն և արտահայտիչ է դարձրել՝ ելա-

[13] Տե՛ս, օրինակ, «Բարեխօսութեամբ» հատվածի՝ 3b համարը կրող տարբերակը, **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 29–30, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 19: Երաժշտաբանաստեղծական ամբողջ ձևի ծավալով ռիթմական շարադրանքի կրկնակի մեծացում տեղի ունի նաև «Տէր, ողորմեա» երգի՝ քառաձայն արական կազմի համար նախատեսված տարբերակում (թիվ 31): Հմմտ. **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 97, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 185:

[14] Վերջինս առավելապես հատուկ է սարկավագի երգաբաժնի հիմքը կազմող դրվագներին՝ սարկավագի և դպիրների փոխերգեցողության համեմատաբար ծավալուն բաժիններում: Հմմտ. «Ամէն. և ընդ հոգւոյդ քում» հատվածը. **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 59–61 և **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 81–85:

կետ ունենալով բնագրային տարբերակում հազվադեպ հանդիպող ներվանկային տարրի դրսևորման ձևերը.

Օրինակ 3 ա, բ

ա) Ն. Թաշճյան (1874)



բ) Մ. Եկմալյան




Ավանդական պատարագային եղանակների ռիթմաինտոնացիոն ոլորտում Եկմալյանի կատարած մասնավոր միջամտություններից մեկն առնչվում է զարդարանքների (մելիզմների) մեկնաբանման սկզբունքին, որը տարբեր դրսևորումներ ունի՝ կախված կոմպոզիտորի հետապնդած գեղարվեստական խնդրի առանձնահատկություններից: Իր մշակումների գերակշռող մասում Եկմալյանը հրաժարվել է Ն. Թաշճյանի գրառած մեղեդիներում բավական հաճախ գործածվող զարդարանքներից (դրանք հիմնականում ներկայացված են ֆորշլագներով և մորդենտներով), ինչն, ըստ երևույթին, կրկին պայմանավորված է պատարագային եղանակների բնութագիրը պարզեցնելու միտումով: Նույն նպատակին է ծառայում նաև թաշճյանական Պատարագում մեղեդու ինտոնացիոն կառույցի բաղկացուցիչ մաս կազմող մանր տևողությամբ հնչյունների մեկնաբանումը որպես զարդարանքներ (գլխավորապես՝ մեկ կամ երկու հնչյունից բաղկացած ֆորշլագներ): Այս երևույթն օրինաչափ է հատկապես զարդոլորուն ոճով օժտված հատվածների եկմալյանական մշակումներում, որոնցում բնագրային մեղեդին հանդես է գալիս ռիթմական մեծացումով (օրինակ 4 ա, բ).

Օրինակ 4 ա, բ

ա) «Խորհուրդ խորին», Ն. Թաշճյան (1878)



բ) «Խորհուրդ խորին», Մ. Եկմալյան



Մյուս կողմից մի շարք դեպքերում թաշճյանական եղանակներում հանդես եկող զարդարանքները Մ. Եկմալյանը վերածել է մեղեդու ինտոնացիոն կառույցի մաս կազմող հնչյունների: Այս փոփոխությունը հատկապես բնորոշ է սարկավագի և դպիրների երգաբաժնի որոշ հատվածների եզրափակիչ դրվագներին և զգալիորեն նպաստում է դրանց մեղեդիական նկարագրի ճկունությանն ու գեղարվեստական արտահայտչականության ուժեղացմանը (տե՛ս վերը, օրինակ 1 ա, բ):

Թեև իր մշակած Պատարագում Մ. Եկմալյանը ձգտել է հնարավորինս հարազատորեն վերարտադրել Ն. Թաշճյանի գրառած մեղեդիների ձայնակարգային առանձնահատկությունները, այդուհանդերձ, այս ոլորտում ևս առկա են որոշակի խմբագրական միջամտություններ: Մի շարք դեպքերում նշված միջամտությունները նվազագույն են՝ արված բնագրային եղանակների ձայնակարգային հատկանիշների համատեքստում: Այսպես, օրինակ, մշակման մեջ կոմպոզիտորը գերակա է դարձրել բնագրի մեղեդիում հանդիպող՝ միևնույն աստիճանի երկու (հիմնական և ալտերացիոն ձևափոխման ենթարկված) դրսևորումներից միայն մեկը՝ նախապատվությունը տալով ալտերացված տարբերակին: Վերոնշյալի ցայտուն օրինակներից է «Ի կոյս վիմէն» *մեղեդին.*

Օրինակ 5 ա, բ

ա) Ն. Թաշճյան (1874)



բ) Մ. Եկմալյան

Բացի դրանից՝ բաղադրակազմ ձայնակարգային հիմք ունեցող որոշ եղանակների (առաջին հերթին՝ *մեղեդիների*) մշակման մեջ Եկմալյանի կատարած փոփոխությունները վկայում են դրանց բազմաձյուղ ձայնակարգային նկարագրի պարզեցման, ձայնակարգային գոյացումների տարբերության հաղթահարման ձգտման մասին[15]: Բացառիկ դեպքերում, սակայն, տեղի ունի հակառակ երևույթը[16]:

---

[15] Տե՛ս «Ամէն. և ընդ հոգւոյդ քում» հատվածի՝քառաձայն արական խմբի տարբերակը: **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 141, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 173:

[16] Մասնավորապես, «Աչքն ծով» *մեղեդու* սկզբնական ֆրազում կոմպոզիտորը փոխել է ձայնակարգը՝ զգալի հակադրություն ներմուծելով ստեղծագործության առաջին՝ հարաբերականորեն ավարտուն

Առանձին՝ ոչ մեծ ենթախումբ են կազմում Մ. Եկմալյանի Պատարագի այն հատվածները, որոնց հիմքում ընկած մեղեդիները, խմբագրելուց բացի, կոմպոզիտորը ենթարկել է առավել ակնառու միջամտությունների: Ինչպես իրավացիորեն նկատում է Ռ. Աթայանը, այս հատվածներում սկզբնաղբյուր–մեղեդիների «կմախքը» պահպանելով և նրա տարրերն օգտագործելով՝ կոմպոզիտորը ստեղծագործաբար զարգացրել է դրանք և ստեղծել նոր, ավելի լիարժեք տարբերակներ[17]: Նման ստեղծագործական աշխատանքի արժեքավոր նվաճումներից են «Միայն Սուրբ» (թիվ 29, Պատարագի բոլոր երեք կազմերի համար նախատեսված տարբերակներ, տե՛ս օրինակ 6 ա, բ), «Ամէն: Հայր Սուրբ» (թիվ 30a, եռաձայն արական խմբի տարբերակ) հատվածները, դպիրների երգաբաժնի հակիրճ դրվագները, որոնք զետեղված են Ս. Պատարագի Կանոնի՝ խնդրանքների և հիշատակությունների ենթաբաժնում (թիվ 24, Պատարագի բոլոր երեք կազմերի համար նախատեսված տարբերակներ) և այլն.

Օրինակ 6 ա, բ

ա) Ն. Թաշճյան (1874)



բ) Մ. Եկմալյան



Այս ենթախմբի մեջ կարելի է ընդգրկել նաև Պատարագի այն երգերը, որոնց առանձին կառուցվածքաբանական հատվածներում կոմպոզիտորը զարգացրել է մեղեդին՝ ներառելով ձայնակարգային հնչյունաշարի նոր՝ տվյալ մեղեդու սկզբնաղբյուրային տարբերակում չդրսևորվող ոլորտներ, ինչի շնորհիվ զգալի չափով հաղթահարվել է Թաշճյանի գրառած որոշ եղանակների զարգացման միօրինակ ընթացքը: Նշվածի ցայտուն վկայություններից է «Քրիստոս իմ մէջ մեր յայտնեցաւ» երգը, որը հանդես է գալիս եկմալյանական Պատարագի բոլոր երեք տարբերակներում: Բանաստեղծական տեքստի՝«Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն» բառերին համապատասխանող երաժշ-

---


հատվածի ձայնակարգի հիմքում, ինչն ուսումնասիրողների կարծիքով խաթարում է հոգևոր երգի ոճական ամբողջականությունը (եղանակի թաշճյանական գրառման մեջ այս հատվածն ունի միասնական ձայնակարգային հիմք): Նույն փոփոխությունն արված է այս ֆրազի բոլոր հետագա դրսևորումներում՝ մեղեդու այլ կառուցվածքային հատվածներում: Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով (աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի), Գիրք Ա, Երևան, 2005, էջ 95, **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 141:

[17] **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 141:


տական դրվագը, որը Եկմալյանի հավելումն է, շահեկանորեն ընդգծում է երգի գեղարվեստական արտահայտչականությունը.

Օրինակ 7 ա, բ

ա) Ն. Թաշճյան (1874)



բ) Մ. Եկմալյան



Ինչպես վերը նշեցինք, Մ. Եկմալյանի Պատարագի որոշ հատվածների մեղեդիական սկզբնաղբյուրները Ն. Թաշճյանի գրառած Պատարագի երկու հրատարակություններում բացակայում են: Իր երկի Առաջաբանում կոմպոզիտորը միայն երկու նման հատված է հիշատակում՝ «Հայր մեր»՝ եռաձայն արական և քառաձայն խառը խմբերի տարբերակ[18], «Գոհանամք զՔէն, Տէր»՝ քառաձայն արական խմբի հավելյալ տարբերակ[19]: Ըստ Մ. Եկմալյանի՝ «Հայր մեր»–ի աղբյուրը այն նույն մեղեդին է, որով նշված երգը կատարվել է «Հայրապետական մաղթանք»–ի ընթացքում, իսկ «Գոհանամք զՔէն, Տէր»–ի քննվող տարբերակի համար հիմք է ծառայել Էջմիածնում բանավոր ավանդույթով պահպանված մի հոգևոր եղանակ, որը շրջանառու է եղել նաև նախքան թաշճյանական հատորների հրատարակվելը[20]: Եկմալյանի «Հայր մեր»–ի կապը «Հայրապետական մաղթանք»–ի նույնանուն հատվածի հետ դրսևորվում է սոսկ ձայնակարգային հիմքի մասնակի ընդհանրությամբ և մեղեդու նույն կառուցվածքային դրվագում հանդես եկող մեկ մեղեդիական դարձվածքի գրեթե լիարժեք համընկնումով (վերջինս բավական հաճախ է հանդիպում «Հայրապետական մաղթանք»–ում ներառված տարբերակում, մինչդեռ Եկմալյանի մշակման մեջ հանդես է գալիս մեկ անգամ[21].

---

[18] Թիվ 27, տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 85, 266:

[19] Թիվ 35b, նույն տեղում, էջ 211:

[20] Տե՛ս Մ. Եկմալյանի Առաջաբանը. **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ VIII:

[21] «Հայրապետական մաղթանք»–ի՝մեր ձեռքի տակ եղած միակ հրատարակությունը հետևյալն է. Մաղթանք Վասն Հայրապետի Ազգիս, Վաղարշապատ, 1878, էջ 3–4 (նույնը վերահրատարակվել է

Օրինակ 8 ա, բ

ա) «Հայր մեր» («Հայրապետական մաղթանք», 1878)



բ) «Հայր մեր», Մ. Եկմալյան



Բացի վերը դիտարկված երկու օրինակներից՝ Մ. Եկմալյանի Պատարագում առկա է ևս յոթ հատված, որոնց մեղեդիական սկզբնաղբյուրները չեն հանդիպում ոչ միայն թաշճյանական գրառումներում[22], այլև XIX վերջին քառորդում և XX դարասկզբին հրատարակված հայ հոգևոր երգերի՝ մեր ձեռքի տակ եղած ժողովածուներում: Նշված հատվածներից երեքը («Քրիստոս պատարագեալ»[23], «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր»[24], «Գոհանամք զՔէն, Տէր»[25]. եռաձայն արական և քառաձայն խառը կազմերի տարբերակներ) բնորոշվում են մեղեդիական սերտ հարազատությամբ վերը դիտարկված «Հայր մեր» երգի հետ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք կա՛մ հորինվել են «Հայր մեր»–ի (կամ վերջինիս սկզբնաղբյուրի) մեղեդիական մոդելի հիման վրա, ինչն ավելի հավանական է, կա՛մ ունեցել են նույն մոդելին հարազատ այլ սկզբնաղբյուրներ: Ըստ Աթայանի՝ մեղեդիական նյութով վերջիններիս է հարում նաև «Եղիցի անուն Տեառն օրհնեալ» հատվածի՝ նույն կազմերի համար նախատեսված տարբերակը[26], սակայն պետք է ընդգծել, որ այս դեպքում կապը խիստ մասնակի է[27]: Մեզ անհայտ սկզբնաղբյուր ունեցող

1895–ին): Դժվար է վստահաբար ասել՝արդյոք Եկմալյանն օգտվել է այս հրատարակություններից որևէ մեկից: Միգուցե նա իր ձեռքի տակ ունեցել է որևէ այլ՝ մեզ անհայտ հրատարակություն կամ, ինչպես «Գոհանամք զՔէն, Տէր»–ի դեպքում, հիմք է վերցրել տվյալ երգի՝բանավոր կենցաղավարող որևէ տարբերակ: Հատկանշական է, որ Կոմիտասը ևս Եկմալյանի մշակած «Հայր մեր»–ի և «Հայրապետական մաղթանք»–ում ներառված նույն երգի միջև սոսկ մասնակի և աննկատելի ընդհանրություն է տեսել (ցավոք, Կոմիտասը չի հիշատակում «Հայրապետական մաղթանք»–ի՝իր ունեցած աղբյուրը, տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, էջ 97): Եթե, այնուամենայնիվ, ընդունենք, որ Մ. Եկմալյանի «Հայր մեր»–ի համար սկզբնաղբյուր է ծառայել մեր նշած հրատարակություններից որևէ մեկը, ապա պետք է փաստել, որ երգի ավանդական մեղեդին ստեղծագործական լուրջ վերամշակման է ենթարկվել կոմպոզիտորի կողմից:

22 Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ռ. Աթայանը: Տե՛ս **Ռ. Աթայան**, Մակար Եկմալյան, էջ 139:

23 Թիվ 32, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 103, 277:

24 Թիվ 34, նույն տեղում էջ 107, 281:

25 Թիվ 35, նույն տեղում էջ 110, 283:

26 Թիվ 36, նույն տեղում, էջ 111, 285:

27 Այս նմուշն իր ձայնակարգային հիմքով և առանձին կառուցվածքային հատվածների ինտոնացիոն զարգացման սկզբունքներով շատ ավելի մոտ է «Եղիցի անուն Տեառն օրհնեալ» հատվածի՝ Ն. Թաշճյանի գրառած մեկ այլ տարբերակին, որը Եկմալյանն օգտագործել է քառաձայն արական խմբի

մշակումների շարքը եզրափակում են «Տէր, ողորմեա» երգի՝ եռաձայն արական խմբում ներառված տարբերակը, «Յորժամ մտցես» երգը[28] և «Երից մանկանց օրհնություն» հատվածը[29]: Սկզբնաղբյուրների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում լիարժեքորեն ճշգրտելու Մ. Եկմալյանի կատարած հնարավոր միջամտությունների սահմանները վերը դիտարկված մշակումներում:

Չնայած իր մշակման մեջ Պատարագի ավանդական մեղեդիները առավելագույնս անձեռնմխելի պահելու՝ Մ. Եկմալյանի հետևողականությանը, պետք է փաստել, որ մասնավոր դեպքերում կոմպոզիտորի կատարած խմբագրումները և փոփոխությունները, այդուհանդերձ, չեն տեղավորվում հայ հոգևոր երաժշտության ոճական ամբողջականության համատեքստում: Ասվածը վերաբերում է, նախևառաջ, որոշ մեղեդիների ձայնակարգային կառույցում արված փոփոխություններին, ինչի հետևանքով դրանք հանդես են գալիս որպես արևմտաեվրոպական մաժոր/մինոր համակարգի դրսևորումներ[30]: Երկրորդ սկզբունքային փոփոխությունը հանդես է գալիս մեղեդիների մետրի ոլորտում. աննշան բացառություններով բոլոր եղանակները (այդ թվում՝ դպիրների երգամասն ամբողջությամբ և սարկավագի երգամասի էական հատվածը) Եկմալյանը ենթարկել է գերազանցապես կանոնավոր տակտաբաժանման՝ փոփոխական տակտերի հազվադեպ կիրառումով: Տակտաբաժանման նկարագրված սկզբունքը գրեթե լիովին անտեսում է հայերեն բանաստեղծական տեքստի շեշտական և տաղաչափական առանձնահատկությունները[31]:

Պատարագում: Հմմտ. **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 77, 104 և **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 209, 222: Ուստի կարող ենք ենթադրել, որ կոմպոզիտորը կա՛մ զգալի խմբագրման է ենթարկել այս տարբերակը, կա՛մ ձեռքի տակ ունեցել է մեկ այլ սկզբնաղբյուր:

28 Թիվ 31a և 37b: Տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 92, 292: «Տէր, ողորմեա» երգը թաշճյանական Պատարագում առավելագույն տարբերակներով ներկայացված նմուշներից է (երկու հրատարակություններում ընդհանուր առմամբ կա այս երգի 22 տարբերակ): Թեև այդ տարբերակներից մի քանիսը զգալիորեն մոտ են Եկմալյանի մշակածին իրենց ձայնակարգային հիմքով և առանձին կառուցվածքային հատվածների ինտոնացիոն զարգացման ընդհանուր տրամաբանությամբ (տե՛ս, օրինակ, **Ն. Թաշճյան**, Պատարագ, 1874, էջ 67, 98), այդուհանդերձ, Եկմալյանի «Տէր, ողորմեա»–ի մեղեդին օժտված է միանգամայն ինքնատիպ և ցայտուն բնութագրով: Ինչ վերաբերում է «Յորժամ մտցես» երգին, ապա վերջինս, Կոմիտասի հավաստմամբ, հայ եկեղեցական երաժշտության անխառն ոճի օրինակ է: Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, էջ 97:

29 Թիվ 45: **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 321:

30 Այս երևույթի առավել ցայտուն արտացոլումներից է Եկմալյանի կատարած հավելումը «Սուրբ, Սուրբ» երգի «և գալոցդ ես» բառերին համապատասխանող դրվագում, ինչի շնորհիվ ձայնակարգը ստանում է եվրոպական մաժորին հատուկ կառուցվածք (թիվ 19): Հիշյալ դրվագն արժանացել է Կոմիտասի քննադատությանը ոչ միայն հայ հոգևոր երգարվեստին հատուկ ձայնակարգային օրինաչափությունները հաշվի չառնելու, այլև հայերենին հատուկ շեշտադրությունը մեղեդու ինտոնացիոն պատկերում չարտահայտելու համար: **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, էջ 93–94: Հավելենք, որ «Սուրբ, Սուրբ»–ի վերոհիշյալ դրվագին հատուկ եվրոպական մաժորի երանգն ի հայտ է գալիս նաև «Հայր մեր»–ի և մեղեդիական առումով նրան առնչվող երգերի ձայնակարգերում (թիվ 27, 32, 34, 35. Պատարագի՝ եռաձայն արական և քառաձայն խառը կազմերի տարբերակներ):

31 Ինչպես նշեցինք, բացառությունները սակավաթիվ են: Դրանցից է, մասնավորապես, սարկավագի երգաբաժնի՝ «Ամէն. և ընդ հոգւոյդ քում» հատվածը, որը զերծ է տակտի գծերից (թիվ 26): Այս հարցը ևս

Պատարագի իր մշակման մեջ հայ եկեղեցական երաժշտության ինքնատիպ ոճական նկարագիրը հնարավորինս հարազատորեն վերարտադրելու ձգտումը մեծապես պայմանավորել է Մ. Եկմալյանի մոտեցումը ավանդական մեղեդիների ներդաշնակման խնդրին: Ինչպես նշում է Ն. Թահմիզյանը, կոմպոզիտորը իր տիրապետած արտահայտչամիջոցների հարուստ զինանոցից գիտակցաբար ընտրել է սոսկ այն հնարները, որոնց կիրառումը անխաթար կպահեր մայր եղանակների ոճն ու ոգին[32]: Պատարագի երգերի եկմալյանական բազմաձայն ներդաշնակման հիմքում եվրոպական դասական երաժշտության ֆունկցիոնալ հարմոնիկ մտածողության սկզբունքներն են՝ համապատասխանեցված հայկական ավանդական մեղեդիների ձայնակարգային և ինտոնացիոն առանձնահատկություններին: Կոմպոզիտորը նախապատվությունը տվել է պարզագույն հարմոնիկ բանաձևերին և կոնսոնանս համահնչյուններին, որոնք գլխավորապես ներկայացված են եռահնչյուններով և նրանց շրջվածքներով: Եկմալյանը գիտակցաբար խուսափել է դիսոնանս համահնչյունների (մասնավորապես, D_7–ի, VII_7–ի և նրանց շրջվածքների) կիրառումից՝ նկատի ունենալով, որ դրանց վառ արտահայտված ֆունկցիոնալ ձգտողականությունը խորթ է հայ երաժշտության ձայնակարգային համակարգին: Բացի դրանից՝ Պատարագի ներդաշնակման մեջ առկա են եվրոպական դասական հարմոնիկ մտածողության նորմերից շեղվող որոշ առանձնահատկություններ, որոնք կրկին պայմանավորված են հայ ավանդական երաժշտության ձայնակարգային օրինաչափություններն արտահայտելու ձգտումով: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, VII բնական աստիճանի եռահնչյունի կիրառումը[33], մաժորում ներդաշնակված երգերում՝ մինոր S–ի[34] և D–ի, իսկ մինորում ներդաշնակված երգերում՝ մաժոր S–ի առկայությունը[35]:

Պատարագային երգերի մշակումների ճնշող մեծամասնության մեջ կոմպոզիտորը գործածել է ակորդային–հոմոֆոնիկ շարադրանքը: Այդուհանդերձ, թե՛ եռաձայն, թե՛ քառաձայն մշակումներում նա հաճախ հատուկ ուշադրություն է դարձրել նաև գլխավոր մեղեդուն ուղեկցող ձայներին՝ օժտելով դրանք հարաբերական ինքնուրույնությամբ[36]:

Պատարագի մեղեդիների ներդաշնակության՝ Մ. Եկմալյանի կիրառած կարևոր սկզբունքներից է ձայնառությունը: Վերջինս կիրառված է գլխավորապես զարդոլորուն

Կոմիտասի քննադատության հիմնական թիրախներից էր: Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, էջ 99–100:

[32] **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան, էջ 75: Պատարագի մեղեդիների՝ Եկմալյանի կիրառած ներդաշնակման սկզբունքների մասին տե՛ս նաև **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան. ստեղծագործական ժառանգությունը, «Էջմիածին», 1958, Ե, էջ 52–53, ինչպես նաև **К. Худабашян**. Армянская музыка от монодии к многоголосию, Ереван, 1977, сс. 167–191.

[33] Տե՛ս **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 194, թիվ 34, տակտեր 3–4:

[34] Նույն տեղում, էջ 24, թիվ 5, տակտ 2:

[35] Նույն տեղում, էջ 9, տակտ 10:

[36] Հմմտ. երկրորդ տենորների և բասերի երգամասերը՝ «Բարեխօսութեամբ» հատվածում (թիվ 3b, էջ 19–22):

մեղեդիական ոճով օժտված երգաասացություններում (սրբասացություններ, մեղեդիներ և այլն), որտեղ մեներգչի կողմից կատարվող գլխավոր մեղեդին ուղեկցվում է երգչախմբի ձայնառությամբ: Տվյալ դեպքում կոմպոզիտորը հետևել է Հայոց եկեղեցում զարդոլորուն երգերի կատարման ավանդական կերպին: Դրանով հանդերձ, ինչպես ակորդային–հոմոֆոնիկ միջոցներով ներդաշնակված երգերում, այնպես էլ ձայնառությունների վրա հիմնված մասերում կոմպոզիտորը երբեմն զարգացրել է ուղեկցող ձայները, ինչի արդյունքում վերջիններս հարաբերականորեն ինքնուրույն մեղեդիական ֆոնի նշանակություն են ստանում[37]: Այսպիսով՝ ազգային երաժշտամտածողության օրինաչափությունների և եվրոպական դասական հարմոնիայի սկզբունքների օրգանական միաձուլման վրա հիմնված միասնական ներդաշնակման ոճը Եկմալյանի Պատարագի գլխավոր արժանիքներից է[38]:

Պատարագի՝ եռաձայն արական, քառաձայն արական և քառաձայն խառը տարբերակներից յուրաքանչյուրը բաղկացած է 36–ական համարից: Կոմպոզիտորը կիրառել է ընդհանուր համարակալման սկզբունքը՝ անփոփոխ թողնելով տվյալ երաժշտաբանաստեղծական հատվածի (կամ նրա մեղեդիական տարբերակի) թվահամարը՝ բոլոր երեք կազմերի համար նախատեսված Պատարագներում: Մի շարք դեպքերում թվային համարակալմանը հավելված են լատինատառ այբբենական նշումներ՝ առանց հստակ որոշարկման: Ավելի հաճախ համապատասխան տառային նշումներով տարբերազատված են տվյալ պատարագային երգի մեղեդիական տարբերակները[39], երբեմն՝ նույն մեղեդիական տարբերակը ներկայացնող որևէ մասի՝ Պատարագի տարբեր կազմերում հանդես եկող ներդաշնակումները[40]: Հարկ է ընդգծել նաև, որ Պատարագի՝ քառաձայն արական և քառաձայն խառը երգչախմբերի տարբերակներում հանդիպում են կատարողական այլ կազմերի համար նախատեսված սակավաթիվ դրվագներ[41]: Ստվա-

---

37 Տե՛ս, օրինակ, «Ամեն: Հայր Սուրբ» (թիվ 30b, էջ 95), «Քրիստոս պատարագեալ» (թիվ 32, էջ 188):

38 Հատկանշական է, որ Կոմիտասը, որոշ վերապահումներով հանդերձ, ընդհանուր առմամբ բավական բարձր է գնահատել Մ. Եկմալյանի Պատարագի ներդաշնակման ոճը: Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Երգեցողութիւնք Ս. Պատարագի, էջ 103:

39 Դրանք իրենց հերթին կարող են հանդես երեք կազմերի համար նախատեսված Պատարագներից որևէ մեկում կամ մի քանիսում: Օրինակ՝ «Բարեխօսութեամբ», թիվ 3a, b (**Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 14, 18), «Տէր, ողորմեա», թիվ 31 a, b (նույն տեղում, էջ 79, 84), թիվ 31c (նույն տեղում, էջ 149): Նույնի 31b տարբերակը հանդես է գալիս նաև քառաձայն խառը խմբի Պատարագում (նույն տեղում, էջ 216):

40 Այսպես, եռաձայն Պատարագում «Հոգի Աստուծոյ» երգի երկու մեղեդիական տարբերակներից առաջինը (23a) քառաձայն արական տարբերակում տեղադրված է 23c համարի ներքո (**Մ. Եկմալյան**, Պատարագ, 1896, էջ 64, 135): Այս մասին տե՛ս նաև **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ XXVII, «Խմբագրի կողմից», կետ 9:

41 Այսպես, քառաձայն արական խմբի Պատարագում «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր» երգը ներկայացված է նաև եռաձայն արական խմբի համար ներդաշնակված տարբերակով (թիվ 34, **Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 196), իսկ նույն Պատարագի եզրափակիչ հատվածները նախատեսված են քառաձայն խառը կազմի համար (նույն տեղում, էջ 221–224): Բացի դրանից՝ քառաձայն խառը խմբի Պատարագը բացող «Խորհուրդ խորին» շարականը կատարում է քառաձայն արական

րածավալ հատորի եզրափակիչ ենթաբաժնում ամփոփված են Պատարագի ընթացքում հավուր պատշաճի երգվող որոշ նմուշներ՝ նախատեսված եռաձայն և երկձայն արական խմբերի համար[42]:

Միևնույն մեղեդիական աղբյուրի վրա հիմնված երգերի մշակումները Պատարագի եռաձայն և քառաձայն կազմերում բնորոշվում են որոշակի տարբերություններով, որոնք գլխավորապես վերաբերում են ներդաշնակման ոլորտին: Այսպես, օրինակ, տվյալ երգի եռաձայն տարբերակի միևնույն համահնչյունները նույնի քառաձայն տարբերակներում դրսևորվում են առանձին տոների կրկնապատկումներով[43] կամ կրկնվող բասային ձայնառության հավելումով[44]: Մի շարք դեպքերում նշված երկու սկզբունքները կարող են համատեղվել: Բացի դրանից՝ դիտարկվող երգերի մեծագույն մասի ներդաշնակումներում առկա են հարմոնիկ գործառույթների մասնակի փոփոխություններ: Ոչ էական տարբերություններ են դրսևորվում նաև որոշ երգերի հակիրճ կառուցվածքային միավորների ռիթմահնտոնացիոն բնութագրում (տակտաբաժանման սկզբունքի, ռիթմական կամ ինտոնացիոն պատկերի, այդ թվում՝ երաժշտական զարդարանքի տեսակի փոփոխություն):

Մ. Եկմալյանի Պատարագն իր մասշտաբայնությամբ հանդերձ օժտված է կոմպոզիցիոն կառուցվածքի ամբողջականությամբ: Անդրադառնալով ստեղծագործության կոմպոզիցիոն առանձնահատկություններին՝ Ն. Թահմիզյանը դիտարկում է նրա ընդհանուր կառուցվածքը որպես երեք խոշոր բաղկացուցիչ մասերի ամբողջություն: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է իրենից ձայնակարգային–թեմատիկ ընդհանրությամբ միավորված ասերգերի, մեներգերի և խմբերգերի ծավալուն խմբավորում՝ իրեն հատուկ երաժշտական–դրամատուրգիական գործառույթով: Ըստ Ն. Թահմիզյանի՝ Պատարագի առաջին մասը («Խորհուրդ խորին»–ից մինչև Ժամամուտ) յուրօրինակ նախաբանի նշանակություն ունի: Այն եռմասանի է (խմբերգ–մեներգ–խմբերգ): Գերիշխում է մինոր ձայնակարգը: Երկրորդ մասը (Ժամամուտից մինչև «Սուրբ, Սուրբ») Թահմիզյանը բնորոշում է որպես բազմաթիվ ասերգերից, մեներգերից ու խմբերգերից բաղկացած, ազատ ծավալվող մի մեծամասշտաբ ռոնդո, որում «ռեֆրենի» դեր ունեն «Սուրբ Աստուած» երգը և նրա հետ սերտ մեղեդիական առնչություն ունեցող մի շարք այլ հատ-

---

երգչախումբը (մենակատար տենոր՝ երգչախմբի ուղեկցությամբ): Դժվար է ասել՝ ինչով են պայմանավորված կազմերի նման տարբերությունները: Դրանք նույն կերպ արտացոլված են նաև եկմալյանական Պատարագի հրատարակված առանձին ձայնաբաժիններում:

[42] Դրանց թվում են «Ընտրեալդ յԱստուծոյ» և «Յորժամ մտցես» երգերը, հինգ մեղեդի, երեք ճաշու շարական և Երից մանկանց օրհնությունը (եռաձայն արական խմբի համար նախատեսված բոլոր զարդոլորուն նմուշները կատարում է մենակատար տենորը՝ բասերի ուղեկցությամբ): Թեև այս ենթաբաժնին առանձին խորագիր է հատկացված, այնուամենայնիվ, դրանում ներառված նմուշները տրված են շարունակական համարակալմամբ (37–45): Մեղեդիներից երկուսը հանդես են գալիս միևնույն համարի ներքո, քանի որ հիմնված են նույն մեղեդիական նյութի վրա (թիվ 40, էջ 304):

[43] Հմմտ, օրինակ, եռաձայն արական և քառաձայն խառը տարբերակների 7, 20, 27 համարները:

[44] Այս հնարն առավել բնորոշ է նույն երգերի՝ եռաձայն և քառաձայն արական կազմերում հանդիպող տարբերակներին, տե՛ս, օրինակ, թիվ 16, 17 և այլն:

վածներ[45]: Դրանց թվում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը, որը Պատարագի երկրորդ մասի երաժշտական զարգացման գագաթնակետն է: Այստեղ, ինչպես և երրորդ մասի երաժշտական համարներում գերակա դեր ունի մաժոր ձայնակարգը: Առավել ծավալուն և ազատ կառուցվածք ունի Պատարագի եզրափակիչ մասը («Սուրբ, Սուրբ»–ից մինչև վերջ): Վերջինիս կենտրոնական երաժշտական կերպարը «Սուրբ, Սուրբ»–ն է, որի հետ մեղեդիական հարազատություն են դրսևորում այս մասի մի շարք կտորներ, այդ թվում նաև «Քրիստոս պատարագեալ» փառաբանական երգը, որը, Թահմիզյանի բնորոշմամբ, Պատարագի գագաթնակետային պահերից է՝ օժտված եզրահանգումնային (ֆինալային) բնույթով[46]: Թե՛ ողջ Պատարագի, և թե՛ նրա երեք բաղկացուցիչ մասերի երաժշտական–կառուցվածքային ամբողջականության ապահովման գործում էական նշանակություն ունի նաև մի շարք նույնատիպ բնորոշ վերջնահանգաձևերի (կադանսների) և մեղեդիական դարձվածքների առկայությունը, ինչը, Ն. Թահմիզյանի կարծիքով, որոշակի զուգահեռներ է ստեղծում լայտմոտիվային զարգացման սկզբունքի հետ[47]:

Մ. Եկմալյանի Պատարագը ոչ միայն կոմպոզիտորի խոշորագույն ստեղծագործական հաջողությունն էր, այլև հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորմանն անմիջապես նախորդող պատմափուլի մեծարժեք նվաճումներից մեկը[48]: Իր Պատարագում Մ. Եկմալյանը ստեղծագործական բարձր ճաշակով և վարպետությամբ իրագործեց հայ ազգային երաժշտամտածողության և արևմտաեվրոպական դասական երաժշտության օրինաչափությունները համադրելու դժվարին խնդիրը՝ ստեղծելով գեղարվեստական ակնառու արժանիքներով և ոճական բացառիկ ամբողջականությամբ օժտված երկ:

Գայանե Ամիրաղյան

---

45 «Յիշեա, Տէր», «Կեցո, Տէր», «Մարմին Տէրունական»:

46 Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան. ստեղծագործական ժառանգությունը, էջ 51:

47 Ն. Թահմիզյանը, մասնավորաբար, ընդգծում է պլագալ կադանսների «զոդող, շաղկապող» դերը Պատարագի երկրորդ մասում: Նույնպիսի միահյուսող նշանակություն ունի «Սուրբ, Սուրբ»–ին անմիջապես հաջորդող՝ դպիրների «Ամէն» դրվագին համապատասխանող մեղեդիական դարձվածքը (**Մ. Եկմալյան**, Պատարագ, 2017, էջ 67), որը որոշակի փոփոխությունների ենթարկվելով՝ հանդես է գալիս հաջորդող մի շարք հատվածներում, այդ թվում՝ «Հայր մեր», «Քրիստոս պատարագեալ», «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր», «Գոհանամք զՔէն, Տէր» երգերի սկզբնական դրվագներում (նույն տեղում, էջ 85, 103, 107, 110): Այսպիսով ինտոնացիոն կապ է ստեղծվում Պատարագի երկրորդ և երրորդ մասերի միջև: Նույնպիսի ինտոնացիոն «կամարներ» կան նաև Պատարագի առաջին և երկրորդ մասերում: **Ն. Թահմիզյան**, Մակար Եկմալյան. ստեղծագործական ժառանգությունը, էջ 51:

48 Հայ երաժշտական մշակույթի համար շրջադարձային նշանակություն ունեցող՝ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադրման առաքելությունը հանճարեղ կերպով իրագործեց Կոմիտասը՝ ստեղծելով ազգային երաժշտության կառուցվածքային և ոճական առանձնահատկություններից օրգանապես սերող դասական երաժշտություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՁԵՍՊ/Ա Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1874:

ՁԵՍՊ/Բ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878:

ԿՊ Կոմիտաս, Պատարագ, Երկերի ժողովածու, յոթերորդ հատոր, խմբագրություն Ռ. Ա. Աթայանի, Երևան, 1997:

ԽՍՊ, 1880 Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1880:

ՍՊ Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ներածութիւնը՝ Մեսրոպ քահանայ Արամեանի, Երեւան, 2010:

ՄԵՊ, 1896 Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Լէյպցիգ–Վիեննա, 1896:

ՄԵՊ, 2017 Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ ի չորիս ձայնս ի ձեռն Մ. Եկմալեան, Երեւան, 2017:

ԹՄ Թորգոմ Արք. Մանուկեան, Կոմիտասի հանճարը իր Պատարագին մէջ, Երուսաղէմ, 2003:

1. էջ 17, թիվ 4. «*Այսօր ժողովեալ*»: Պատարագի 1896 թ. հրատարակության մեջ (եռաձայն արական խմբի տարբերակ) 3a թվահամարը կրող «Բարեխօսութեամբ» խնկարկության շարականի «Այսօր ժողովեալ» հատվածը մեկ կառուցվածքաբանական ամբողջություն է կազմում շարականի հետ (ՄԵՊ, 1896, էջ 16), սակայն քառաձայն արական և խառը խմբերի համար գրված տարբերակներում նույն հատվածն առանձնացված է որպես ինքնուրույն երաժշտաբանաստեղծական միավոր՝ առանձին համարակալմամբ (ՄԵՊ, 1896, էջ 100, 183): Հետևելով Պատարագի քառաձայն արական և խառը տարբերակներին՝ մենք Պատարագի եռաձայն արական տարբերակում ևս «Այսօր ժողովեալ» հատվածը ներկայացրել ենք առանձին համարակալմամբ:

2. էջ 23, Սրկ. «*Եւ ևս խաղաղութեան...*»: Ինչպես թաշճյանական Պատարագի երկու հրատարակություններում, այնպես էլ Մ. Եկմալյանի Պատարագում սարկավագի երգաբաժնի որոշ հատվածներ տրված են միայն բառատեքստով՝ առանց երաժշտական բաղկացուցչի: Ընդ որում նման հատվածների մեծ մասը թաշճյանական աղբյուրներում և Եկմալյանի մշակման մեջ համընկնում է: Ենթադրաբար՝ այդ կտորները երգվել են կա՛մ թաշճյանական Պատարագում գրառված՝ սարկավագի այլ եղանակավոր քարոզների մեղեդիներով, կա՛մ բանավոր ավանդույթով կենցաղավարող մեկ ուրիշ համապատասխան մեղեդիով, որը Պատարագում չի ներառվել: Կարելի է ենթադրել նաև, որ այդ դրվագներն առհասարակ չեն երգվել, ինչը քիչ հավանական է, քանի որ ներկայումս դրանց կատարումը, որպես կանոն, եղանակավոր է (դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Մ. Եկմալյանի Պատարագում սարկավագի որոշ դիտարկվող դրվագների մոտ նշված է համապատասխան ձայնաստիճանը, օրինակ՝ էջ 102, 109, 187):
Շատ ավելի քիչ են այն դեպքերը, երբ Մ. Եկմալյանի մշակման մեջ միայն բառատեքստով ներկայացված սարկավագի քարոզները Ն. Թաշճյանի հատորներում եղանակավոր են: Տվյալ պարագայում ևս պատճառների մասին կարող ենք միայն ենթադրել (միգուցե ինչ–ինչ հանգամանքների բերումով այդ քարոզների եղանակները կամ դրանք Պատարագում առկա մեկ այլ քարոզի մեղեդիով կատարելու մասին կոմպոզիտորի ցուցումները դուրս են մնացել հատորից, կամ, ի վերջո, կոմպոզիտորն ընտրությունը թողել է սարկավագին, որը ծեսի ընթացքում կարող էր կիրառել Ն. Թաշճյանի գրառումներում հանդիպող տվյալ քարոզի մեղեդին կամ վերջինիս տարբերակներից որևէ մեկը): Ինչ վերաբերում է սարկավագի՝ 23–րդ էջում առկա դրվագին, ապա թաշճյանական հրատարակություններում վերջինիս համապատասխանող մեղեդիական տարբերակի աղբյուրը հետևյալն է. ՁԵՍՊ/Ա, էջ 31 (նույնը՝ ՁԵՍՊ/Բ, էջ 14): Նմանատիպ այլ դրվագներին կանդրադառնանք ստորև:

3. էջ 25, թիվ 6. «*Յիշեա, Տէր, և ողորմեա*» (տե՛ս նաև էջ 123, 237): Պատարագամատույցներում առկա ցուցման համաձայն՝ դիտարկվող հատվածում սարկավագի չորս հրահանգներից յուրաքանչյուրին դպիրները պետք է արձագանքեն համապատասխան դրվագով (տե՛ս, օրինակ, ՍՊ, էջ 88–89): Եկմալյանի Պատարագի տվյալ հատվածում դպիրների բոլոր չորս պատասխանները միաձույլ են և կատարվում են առանց ընդմիջման: Դի-

տարկվող հատվածը նույն կերպ է ներկայացված նաև Ձայնագրյալ Պատարագում (ընդ որում տվյալ դեպքում նշված է սարկավագի հրահանգներից միայն առաջինը. ՁԵՍՊ/Ա, էջ 32, ՁԵՍՊ/Բ, էջ 15, 56 և այլն) և Կոմիտասի Պատարագում (ԿՊ, էջ 35): Ռ. Աթայանը ենթադրում է, որ դպիրների պատասխանների միավորումը «Պատարագի արարողության մեջ ինչ–որ ժամանակ տեղի է ունեցել և վաղուց ավանդական դարձել» (ԿՊ, Ծանոթագրություններ, էջ 144): Թորգոմ արք. Մանուկյանի կարծիքով ևս՝ նմանատիպ դրսևորումները հետսամուտ սովորության արդյունք են, որոնք խախտում են սարկավագի և դպիրների փոխերգեցողության երկխոսական ձևը և խաթարում այս ծիսական հատվածների իմաստաբանական ամբողջականությունը (ԹՄ, էջ 46–47):

4. էջ 29, Սրկ. *«Եւ ևս խաղաղութեան...»* (տե՛ս նաև էջ 127, 241): Թաշճյանական Պատարագի երկու հրատարակություններում սարկավագի և դպիրների փոխերգեցողության տվյալ ենթաբաժնում սարկավագի երգամասից եղանակավորված է միայն առաջին՝ վերոհիշյալ հրահանգը (ՁԵՍՊ/Ա, էջ 34, 85, ՁԵՍՊ/Բ, էջ 14, 57): Թեև համապատասխան ցուցում չկա, սակայն ըստ երևույթին հաջորդող հրահանգները ևս պետք է կատարել նույն եղանակով, ինչն առհասարակ տիպական է սարկավագի և դպիրների փոխերգեցողության բաժիններին:

5. էջ 29, թիվ 8. *«Կեցո, Տէր: Շնորհեա, Տէր»*: Սույն հատվածի սարկավագի երգաբաժնի պակասող խոսքերը լրացրել ենք ըստ Մ. Եկմալյանի Պատարագի՝ քառաձայն արական և քառաձայն խառը կազմերի համար արված մշակումներում զետեղված տարբերակների (ՄԵՊ, 1896, էջ 105, 190): Դիտարկվող հատվածի բոլոր երեք տարբերակների եզրափակիչ դրվագում («Տէր, ողորմեա») տեղի ունի սարկավագի և դպիրների փոխերգեցողության ավանդական կառույցի խախտման նույն երևույթը, որն առկա էր 6–րդ համարում (տե՛ս ծանոթ. 3): Պատարագամատույցի ցուցումով՝ սարկավագի երեք հրահանգներից յուրաքանչյուրին ի պատասխան երգվող դպիրների դրվագները տվյալ դեպքում միաձուլված են մեկ երաժշտաբանաստեղծական ամբողջության մեջ:

6. էջ 65: Պատարագի 18–րդ համարը ներկայացնում է սարկավագի և դպիրների փոխերգեցողության ոչ ծավալուն մի ենթաբաժին, որը նախատեսված է հանդիսավոր օրերին երգելու համար և անմիջապես նախորդում է «Սուրբ, Սուրբ» երգին: Եկմալյանի Պատարագում այս ենթաբաժինն առկա է միայն քառաձայն արական կազմի տարբերակում (ՄԵՊ, 2017, էջ 157):

7. էջ 68, թիվ 20. *«Ամէն: Հայր Երկնաւոր»* (տե՛ս նաև էջ 162, 254): Ինչպես նշում է Թորգոմ արք. Մանուկյանը, այս հատվածի առաջին՝ «Ամէն» բառը դպիրների պատասխանն է քահանայի անմիջապես նախորդող՝ «Արբէք ի Սմանէ» հրահանգին և իմաստաբանական կապ չունի «Հայր Երկնաւոր» երգի հետ (ԹՄ, էջ 104): Այդուհանդերձ, Մ. Եկմալյանը ներհյուսել է վերոհիշյալ խոսքը երգի երաժշտաբանաստեղծական կառույցին:

8. էջ 72, թիվ 22. «*Առաջի Քո Տէր: Որդի Աստուծոյ*» (տե՛ս նաև էջ 165, 259): Ինչպես «Ամէն: Հայր Երկնաւոր» երգի դեպքում (տե՛ս ծանոթ. 7), այս հատվածում ևս դպիրների սկզբնական ֆրազը քահանայի նախորդող հրահանգի պատասխանն է, որը, սակայն, կոմպոզիտորը երաժշտական առումով միաձուլել է անմիջապես հաջորդող՝ «Որդի Աստուծոյ» երգին (ԹՄ, էջ 124):

9. էջ 78 և 169–170, թիվ 24. «*Յիշեա, Տէր, և ողորմեա»:* Պատարագի՝ եռաձայն արական և քառաձայն արական տարբերակներում սարկավագի առաջին հրահանգին («Առաքելոց սրբոց...») հաջորդող՝ դպիրների պատասխանը ներկայացված է միայն բառատեքստով՝ առանց երաժշտական բաղադրիչի (ՄԵՊ, 1896, էջ 68, 137): Խառը խմբի համար նախատեսված տարբերակում, սակայն, սարկավագի այս հրահանգին ի պատասխան, կոմպոզիտորը պատվիրել է նույնությամբ կրկնել դպիրների՝ անմիջապես նախորդող երաժշտաբանաստեղծական դրվագը, որը հնչում է քահանայի «Աստուածածնի Սրբոյ Կուսին...» հրահանգից հետո (ՄԵՊ, 1896, էջ 207, ՄԵՊ, 2017, էջ 263): Նույն կերպ ենք վարվել նաև մենք՝ այս հատվածի վերոհիշյալ երկու տարբերակներում:

10. էջ 90. Սրկ. «*Օրհնեա, տէր»:* Դպիրների՝ «Ամէն: Հայր Սուրբ» (թիվ 30a) հատվածին անմիջապես նախորդող սարկավագի այս քարոզի թաշճյանական սկզբնաղբյուրն ունի զարդոլորուն մեղեդի: Նույնատիպ ոճ ունեն նաև վերջինիս անմիջապես նախորդող և հաջորդող կտորների՝ Ն. Թաշճյանի գրառած տարբերակները, որոնք Մ. Եկմալյանն իր մշակման մեջ վերափոխել է՝ զգալիորեն պարզեցնելով դրանց մեղեդիական նկարագիրը (ՁԵՍՊ/Ա, էջ 65–66): Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սարկավագի վերոհիշյալ դրվագն անհրաժեշտության դեպքում առավել նպատակահարմար է կատարել սարկավագի՝ նույն էջում զետեղված և նույն բանաստեղծական տեքստի վրա հիմնված նախորդ դրվագի մեղեդիով (վերջինս հանդես է գալիս եռակի կրկնությամբ): Հավելենք, որ քառաձայն խառը Պատարագում սարկավագի դիտարկվող քարոզն ունի նույն դրսևորումը, ինչ եռաձայն տարբերակում (էջ 269), իսկ քառաձայն արական խմբի Պատարագում այն բացակայում է:

11. էջ 91, Սրկ. «*Օրհնեա, տէր»:* «Տէր, ողորմեա» երգին (թիվ 31a) անմիջապես նախորդող սարկավագի այս քարոզը Ն. Թաշճյանի Պատարագի երկու հրատարակություններում ներկայացված է երկու մեղեդիական տարբերակներով (խոսքը վերաբերում է եկմալյանական տվյալ մշակման հետ ձայնակարգային նույն հիմքն ունեցող տարբերակներին): Դրանցից մեկը (ՁԵՍՊ/Ա, էջ 66) կոմպոզիտորն օգտագործել է երգի երկրորդ՝ 31b համարը կրող տարբերակում (ՄԵՊ, 2017, էջ 98–99, 273), իսկ երկրորդը, որ հանդիպում է միայն 1878 թ. հրատարակության մեջ, մեղեդիական ոճով և ինտոնացիոն զարգացման տրամաբանությամբ չի համապատասխանում Մ. Եկմալյանի մշակած մեղեդուն (ՁԵՍՊ/Բ, էջ 38):

12. էջ 208, Սրկ. «*Օրհնեա, տէր*»: Սարկավագի տվյալ քարոզի մեղեդու՝ թաշճյանական Պատարագում հանդիպող տարբերակը տե՛ս ՁԵՍՊ/Ա, էջ 104:

13. էջ 224, Սրկ. «*Երկիւղածութեամբ լըւարուք*»: Սարկավագի և դպիրների փոխերգեցողության այս եզրափակիչ բաժինն իր մեղեդիական նյութով գրեթե ամբողջովին համընկնում է նույն բաժնի՝ 210 էջում առկա տարբերակի հետ, ուստի սարկավագի վերոհիշյալ ասերգի համար կարող է հիմք ծառայել նույն էջում բերված համապատասխան դրվագի մեղեդին:

14. էջ 236, տողատակ: Մեկ կամ մեկուկես աստիճան «խոնարհ» (ցածր) ձայնով երգելու մասին հեղինակի ցուցումը վերաբերում է սարկավագի երգաբաժնի հնչողության ուժգնությանը (դինամիկային): Դպիրների՝ անմիջապես նախորդող և հաջորդող դրվագների դինամիկ նշանները նկատի ունենալով, Մ. Եկմալյանի հրահանգի համաձայն, սարկավագի երգաբաժինը՝ մինչև «Փառք Քեզ, Տէր» հատվածը (թիվ 7), պետք է կատարվի ***pp*** կամ ***ppp***:

15. էջ 240, տողատակ. Մ. Եկմալյանի ծանոթագրությունը: Հիմք ընդունելով հեղինակի ցուցումը և Պատարագի կատարման հետագա ընթացքը դյուրին դարձնելու համար մենք լրացրել ենք սարկավագի երգաբաժինն ըստ Պատարագի եռաձայն արական խմբի համար նախատեսված տարբերակի՝ անհրաժեշտության դեպքում դիմելով տոնայնական փոխադրության:

16. էջ 289, թիվ 37a. «*Ընտրեալդ յԱստուծոյ*»: Պատարագամատույցներում այս երգի սկզբնատողում առկա են «ով երջանիկ սուրբ քահանայ» խոսքերը, մինչդեռ Եկմալյանի Պատարագում (ինչպես նաև Ն. Թաշճյանի գրառած պատարագային երգասացություններում) դիտարկվող երգի նույն հատվածում նշված է. «ով երջանիկ սուրբ հայրապետ» (ՄԵՊ, 1896, էջ 229, ՁԵՍՊ/Բ, էջ 195–196): Այս տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայ Առաքելական Ս. Եկեղեցում որպես պատարագիչ կարող են հանդես գալ նաև եպիսկոպոսն ու կաթողիկոսը: Մենք անփոփոխ ենք թողել Եկմալյանի Պատարագի տեքստը, սակայն անգլերեն թարգմանության համար հիմք ենք ընդունել Պատարագամատույցներում առկա տարբերակը (ՄԵՊ, 2017, էջ LI):

17. էջ 302–303: Հայ հոգևոր երգարվեստում զարդոլորուն (մելիզմատիկ) մեղեդիական ոճի պայմաններում որոշ բառերի վանկատման ընթացքում երբեմն առաջանում են ոչ իմաստակիր հավելավանկեր: Նման երևույթի հատկանշական օրինակ է «Քրիստոս» անվան եղանակավորումը «Այսօր մեռեալք» *մեղեդու* դիտարկվող հատվածում: «Այսօր հարսն Լուսոյ» մեղեդու եզրափակիչ մասում նույնպիսի հավելավանկեր են գոյանում «Արեամբ» բառի եղանակավորման ժամանակ (ՄԵՊ, 2017, էջ 312–313):

Գ. Ամիրաղյան

ANALYTICAL ESSAY

In the Preface of his Liturgy Makar Yekmalyan mentions that the main melodic source of his composition is the material summarized[1] in the two editions of the N. Tashjyan's Liturgy[2]. The two versions of the chants *Our Father* and *We Give Thanks* are the only exceptions. Their melodic basis has other principles referring to the Etchmiadzin tradition of spiritual chanting[3].

Each one of the above-mentioned Tashjyan publications includes more than one melodic version of the Liturgy, intended for certain days of the Church calendar. The 1874 edition includes two subsections, the first of which is untitled. It mainly consists of the liturgical chants, appropriate for Sundays, the other solemn days and the Major Feasts. It also consists of certain units representing various appropriate liturgical genres, such as: *meghedies* and hagiodies[4]. The second section of the same edition, titled *For Ordinary Days*, includes the liturgical chants performed for the ordinary days[5]. The sections of the first part of the 1874 publication of the Tashjyan Liturgy were supplemented and integrated into separate subsections in the 1878 publication of the Liturgy. The version of the Liturgy *For Ordinary Days* was expanded and another version was also added to be performed specifically during the period of Lent. Therefore, the 1878 edition includes the following

---

1 *Chants of the Divine Liturgy of the Armenian Apostolic Church,* transcribed and arranged for three and four voices by M. Yekmalyan. Leipzig-Vienna, 1896, p. 11 (hereafter: **M. Yekmalyan**. *Liturgy,* 1896); *Chants of the Divine Liturgy of the Armenian Apostolic Church,* transcribed and arranged for three and four voices by M. Yekmalyan. Yerevan, 2017, p. XI (hereafter: **M. Yekmalyan**. *Liturgy,* 2017).

2 *Notated Chants of the Divine Liturgy*. Vagharshapat, 1874 and 1878 (hereafter: **N. Tashjyan**. *Liturgy,* 1874 and 1878). Since 1930s thanks to Spiridon Melikyan, there has been an opinion among Armenian musicologists that M. Yekmalyan used the Etchmiadzin melodies only in the first and in the third versions (written for three-part male and four-part mixed choirs) of his Liturgy, whereas when composing the second version intended for four-part male choir the composer used melodies belonging to the Constantinople tradition (and in this case the notation by Tashjyan is considered to be the reflection of the Constantinople tradition). Later, this opinion was convincingly refuted by R. Atayan and N. Tahmizyan. Cf. **R. Atayan**. "Makar Yekmalyan". In: *Makar Yekmalyan: Documents, Letters, Recollections, Articles*. Yerevan, 2006, pp. 137-140 (in Armenian); **N. Tahmizyan**. *Makar Yekmalyan*. Yerevan, 1981, pp. 68-69 (in Armenian).

3 See **M. Yekmalyan**. *Liturgy*, 2017, p. X. We can find seven more parts in the Liturgy which have melodic principles not presented in the Tashjyan Liturgy. We shall examine this issue hereafter. At last, in his arrangement Yekmalyan has also included three appropriate Midday hymns (№ 42-44). Their sources are taken from the Hymnal written down by N. Tashjyan. See *Notated Hymnal of the Sacred Chants*. Vagharshapat, 1875, pp. 65-66, 71-72, 437-438.

4 See **N. Tashjyan**. *Liturgy*, 1874, pp. 3-76.

5 *Ibid.*, pp. 78-160.

versions of the Liturgy: 1) *For Sundays and Other Solemn Days*, 2) *For Ordinary Days,* 3*) For Major Feasts*[6], 4) *For Saturdays and Sundays of the Lent*.

The comparison of the musical components of the homonymous units included in the same versions of the 1874 and 1878 editions of the Tashjyan Liturgy shows that they are rarely completely identical. In most cases the homonymous musical-poetic parts represent melodic versions, notably analogous and completely coinciding on the level of certain structural fragments. There is almost no difference between the most of the samples except insignificant rhythm and intonation variations of particular melodic phrases. Notably, the samples in the first edition that have relatively simple syllabic and neumatic melodic style show a better developed melodic design in the 1878 edition, which can be explained by the dominating role of neumatic and melismatic style[7]. However, in some cases the opposite phenomenon can also be observed[8].

Composing his Liturgy M. Yekmalyan mostly referred to the first edition of the Tashjyan Liturgy of 1874 as a source, but in several cases the second edition was also used. The melodic material of the majority of Yekmalyan's arrangements is borrowed from the first version (for Sundays) of the Liturgy recorded by Tashjyan. He partly used also the chants of the ordinary days, as well as those intended for the Major Feasts and the Lent from the 1878 edition. In all three versions of his arrangements (three-part male, four-part male and four-part mixed choirs), the composer's objective was to preserve as much as possible the integrity of the rite and to show all the richness of the melodic material comprised in the two editions of Tashjyan Liturgy at the same time. In all three arrangements of the Yekmalyan Liturgy half of the immobile parts appears in two or sometimes even three melodic versions. Nevertheless, Yekmalyan did not include a great number of mobile parts of the Liturgy, including a hagiody, some *meghedies*, all the *taghs*, the most part of the Midday hymns, to mention a few. Apart from the parts sung by deacons and clerks, fragments of the priest chanting (only in text) are presented in the Yekmalyan Liturgy, as well as some brief explanations related to the details of the ritual ceremony[9].

---

